ԶԵԿՈՒՅՑ

«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ 19 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ»

NGNGO
NEW GENERATION

Երևան, Հայաստան 2024

Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» (www.juremonia.am) ծրագրի շրջանակում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցի հեղինակ՝ Շուշան ԽՆԿՈՅԱՆ

Դիտարկեցին՝ Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ և Արշակ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Դիզայնը՝ Լևոն ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ

Շապիկի նկարը՝ ՆՍՀԿ

Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:
Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2024թ.

© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն
Հասցե՝ ՀՀ. 0001, ք.Երևան, Թումանյան փող., 10 շենք, բն 7
Հեռախոս՝ +374 60 47 8989, +374 60 37 8989
Էլ. հասցե՝ contact@ngngo.net
Կայքէջ՝ www.ngngo.net

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 Հապավումներ և հասկացություններ

5 Ներածություն

7 Մեթոդաբանություն

7 Հետազոտության սահմանափակումներ

12 Տասնինները և բարձր տարիքի դատապարտյալների կրթության ոլորտի ներպետական կարգավորումներ

16 Հանրակրթական ծրագիրը ՔԿՀ-ներում

18 Հետազոտության արդյունքները

29 Միջազգային փորձ

35 Եզրակացություն

38 Առաջարկություններ
- Օրենսդրական
- Գործնական

42 Հավելվածներ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ

Հայաստանի Հանրապետություն

ԱՆ

Արդարադատության նախարարություն

ԿԳՄՍՆ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀԿ

Հասարակական կազմակերպություն

ՆՍՀԿ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ

ՔԿՀ

Քրեակատարողական հիմնարկ

Դիտորդների խումբ

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ

ՊՈԱԿ

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍՀԻԱԲ

Սոցիալ-հոգեբանական, իրավական աշխատանքների բաժին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև քրեական պատիժների նպատակային իրագործումն առավել արդյունավետ դարձնելու համար, ի թիվս այլնի, պետք է թիրախավորվեն նաև միջազգային չափանիշներին համահունչ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև դատապարտյալների վերասոցիալականացումը: **Վերասոցիալականացման միջոցառումների շարքում ուրույն նշանակություն ունի ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի իրացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը:** Այն, ամբողջ աշխարհում, դատապարտյալների իրավունքների պաշտպանության ոլորտում առաջնային նշանակություն ունի ինչպես նրանց՝ հետագա օրինապահ կյանքին անցնելու, այնպես էլ՝ վերաինտեգրման գործընթացներում:

ՀՀ քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) դատապարտյալների կրթության իրավունքի հիմնախնդիրն անհրաժեշտ է դիտարկել մարդու իրավունքների միջազգային ուղենիշների սահմաններում, ինչպես նաև ներպետական օրենսդրության շրջանակներում:
Միջազգային հռչակագրերը, կոնվենցիաները, կանոնները, բանաձևերը և առաջարկությունները սահմանում են մարդու իրավունքների համընդհանուր շրջանակը՝ այդպիսով կարգավորելով նաև ՔԿՀ կրթության իրավունքը: Դրանք կրում են խորհրդատվական բնույթ և ուղենշային, քաղաքական, սոցիալական նշանակություն ունեն ՀՀ քրեակատարողական համակարգի՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցման գործում:

Եթե անդրադառնանք ներպետական օրենսդրությանը, ապա ՀՀ Սահմանադրությամբ է ամրագրված անձի կրթության իրավունքը (հոդված 38): Կրթության ոլորտում հիմնարար օրենքը «Կրթության մասին» ՀՀ օրենքն է: Այնուամենայնիվ, մինչև 2022թ.-ը, ՔԿՀ-ներում 19 և բարձր տարիքի անձանց համար հանրակրթությունը հասանելի չի եղել օրենսդրական սահմանափակումների պատճառով:

ՀՀ-ում դեռևս նախորդ տարիներից իրականացվող լայնածավալ բարեփոխումների շրջանակներում առանձնակի կարևորվել է քրեական պատիժների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը, դրանց լիարժեք իրացման երաշխիքների ստեղծումը, իրավունքների և օրինական շահերի իրացմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների նախատեսումը և շարունակական

կատարելագործումը, դրանց նորովի արժևորումը: Հատկանշական է, որ քրեակատարողական ոլորտում վարվող քաղաքականության կատարելագործումը, որպես թիրախային ուղղություն, առանձնացվել է նաև Կառավարության 2019-2023 թվականների ծրագրում[1], որով ամրագրվել է ՔԿՀ-ներում հանրակրթության իրականացումը՝ առանց տարիքային սահմանափակման, որին հաջորդել է «Կրթության մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացումը: Այդ փոփոխություններից հետո 2022թ.-ի սեպտեմբեր ամսին մեկնարկել է 19 և բարձր տարիքի անձանց համար հանրակրթության ծրագիրը:

Սույն զեկույցում ամփոփված են ոլորտում (19 և բարձր տարիքի դատապարտյալների հանրակրթության ապահովման) առկա խնդիրները՝ օրենսդրական կարգավորումներից մինչև դրանց գործնական կիրառումը եղած խնդիրները, ինչպես նաև դրական փորձառությունը: Այն հասցեագրում է ոլորտում որոշում կայացնողներին, որոնք պատասխանատու են վերոնշյալ բարեփոխումների, դատապարտյալների կրթության իրավունքի իրացման արդյունավետության բարձրացման համար:
Զեկույցը բաղկացած է բաժիններից, որոնցում մանրամասն ներկայացված է օրենսդրական դաշտում և գործնականում առկա խնդիրները:
Զեկույցը ամփոփվում է եզրակացությամբ և համապատասխան առաջարկություններով:

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137161

Մեթոդաբանություն

Սույն զեկույցի կազմման համար անհրաժեշտ ուսումնասիրությունները կատարվել են 2023թ.-ի սեպտեմբերից 2024թ. մարտ ամիսներին ընկած ժամանակահատվածում: Ուսումնասիրությունը կատարվել է «Արմավիր», «Նուբարաշեն», «Արթիկ», «Աբովյան», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում, քանի որ այդ ՔԿՀ-ներում է իրականացվել և իրականացվում հանրակրթական ծրագիրը:

Ուսումնասիրվել է 19 և բարձր տարիքի դատապարտյալների հանրակրթության իրավունքի իրացման հետ կապված իրավիճակը: Ուսումնասիրվել է միջազգային փորձը՝ համագործակցելով միջազգային փորձագետի հետ, ինչպես նաև ներպետական ավելի քան 30 փաստաթուղթ՝ ներառյալ իրավական ակտեր, մամուլի հրապարակումներ և այլն:
Օրենսդրության ուսումնասիրության նպատակն է եղել վեր հանել հետևյալ հարցերի պատասխանները.

- Որո՞նք են եղել 19 և բարձր տարիքի դատապարտյալների հանրակրթության իրավունքի ապահովման նոր օրենսդրական կարգավորումների հիմնավորումները,
- Ինչպիսի՞ մեխանիզմներ են նախատեսվել նոր օրենսդրական փոփոխություններով,

Հաջորդ քայլով իրականացվել է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» ծրագրի (Ծրագիր) [2] ուսումնասիրությունը, որի նպատակն է եղել վեր հանել հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպիսի՞ չափորոշիչներով են ընտրվել հանրակրթական ծրագրի մասնակիցները,
- Ինչպիսի՞չափորոշիչներով են ընտրվել ուսուցիչները,
- Ինչո՞ւ հնարավոր չի եղել ծրագրում ներգրավել բոլոր այն անձանց, ովքեր կարիք են ունեցել հանրակրթության,
- Ինչպիսի՞ խոչընդոտներ են առաջացել հանրակրթական ծրագրի իրականացման ընթացքում,
- Որքանո՞վ է պահպանվել թափանցիկությունը թե՛ ուսուցիչների ընտրության ընթացակարգերի, թե՛ անհրաժեշտ պիտույքների ձեռքբերման գործընթացներում:
- Ինչպիսի՞նն է այդ նոր մեխանիզմների կիրարկման պրակտիկան, և ինչպիսի խնդիրներ են առկա:

Ուսումնասիրվել է 2022 և 2023թթ.-ին հանրակրթական ծրագրի իրականացման շրջանակը, մասնավորապես,

- Ո՞ր քրեակատարողական հիմնարկներում է սկսվել իրականացվել ծրագիրը 2022թ.-ին և 2023թ.-ին,
- Քանի՞ դատապարտյալ է ընդգրկվել ծրագրում,
- Ինչպիսի՞ գործոններ են հիմք հանդիսացել՝ նոր քրեակատարողական հիմնարկներ ընդգրկելու և մասնակիցների շրջանակը մեծացնելու համար (եթե այդպիսի փոփոխություն եղել է):

Այս բոլոր հարցերի ուսումնասիրման նպատակով, մշակվել են դատապարտյալների, ՔԿՀ պատասխանատու ստորաբաժանման (որպես կանոն, այդ ստորաբաժանումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններն են (ՍՀԻԱԲ)) և հանրակրթության ծրագիրն իրականացնող ՊՈԱԿ-ի հետ հարցազրույցի հարցաշարերը:

Դատապարտյալների հետ հարցազրույցներն իրականացնելիս ընտրվել են 19 և բարձր տարիքի անձինք: Ցուրաքանչյուր ՔԿՀ-ում նախատեսվել էր իրականացնել 4-ական հարցազրույց, որից 2-ը Ծրագրում ընդգրկված, 2-ը ծրագրից դուրս մնացած դատապարտյալների հետ: Ընդհանուրը իրականացվել է թվով 18 դատապարտյալի հետ հարցազրույց:



Հարցազրույցները անցկացվել են առանձին, անանուն տարբերակով, որպեսզի հնարավոր լինի ավելի օբյեկտիվ տեղեկատվություն ստանալ, և բացառվի դատապարտյալների կաշկանդվածությունը: Մինչև հարցազրույցների իրականացումը անձանց տեղեկացվել է անձնական տվյալների գաղտնիության, հարցազրույցի ընթացքում ստացված տվյալների օգտագործման եղանակների մասին:

Հարցազրույցներին մասնակցած անձանց տարիքային շեմը տատանվել է 23-64-ի սահմաններում (միջինը 43 տ.), իսկ ազատազրկման են դատապարտվել 3 տարուց մինչև ցմահ:

ՔԿՀ-ներում հարցազրույցները, բացի դատապարտյալներից՝ իրականացվել են նաև սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների պատասխանատուների հետ:

Հարզացրույց է իրականացվել նաև հանրակրթական ծրագիրն իրականացնող «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերականգնողական ծրագրերի և հանրակրթության բաժնի պետի հետ:

Հետազոտության սահմանափակումներ

Արդյունավետ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով՝ ուսումնասիրության մեթոդաբանությամբ նախատեսվում էր մշակել հատուկ հետազոտության գործիքներ և համապատասխան ՔԿՀ-ներում դիտարկել գործնականում դասերի իրականացման ընթացքը ևս:
Բացի տեղում ուսումնասիրություն կատարելուց՝ նախատեսվում էր նաև հարցազրույցներ իրականացնել դատապարտյալների շրջանում՝ հանրակրթական ծրագրում ներգրավված, ծրագրից դուրս մնացած/դուրս եկած անձանց, ինչպես նաև «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ: Այդ նպատակով, 2023թ.-ի օգոստոսի 15-ին ՆՍՀԿ-ն գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ-ին՝ խնդրելով ծրագրի փորձագետին տալ մուտքի թույլտվություն վերոնշյալ ՔԿՀ-ներ (Հավելված 1.1): Գրությունը ԱՆ-ի կողմից վերահասցեագրվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին: 2023թ.-ի օգոստոսի 22-ին ստացվել է ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների (ՍՀԻԱ) բաժնի պետ պատասխան գրությունը, համաձայն որի՝ չի կարող տրամադրվել մուտքի թույլտվություն ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներ՝ մշտադիտարկման այցեր կատարելու համար (Հավելված 1.1):
2023թ.-ի նոյեմբերի 20-ին ՆՍՀԿ-ն կրկին գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ-ին՝ խնդրելով ուսումնասիրության իրականացման նպատակով թույլ տալ մուտք գործել նշված ՔԿՀ-ներ և իրականացնել հարցազրույցներ (Հավելված 1.2): 2023թ.-ի նոյեմբերի 29-ին ստացվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ՍՀԻԱ բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարողի պատասխան գրությունը, որի համաձայն՝ ի հավելումն նախորդ պատասխանի՝ հիմք ընդունելով նաև ՊՈԱԿ-ի դիրքորոշումը, չեն կարող տրամադրել մուտքի թույլտվություն (Հավելված 1.2):

Ելնելով նշված խնդիրների առկայությունից՝ ՆՍՀԿ-ն 2024թ-ի հունվար ամսին գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբին (Դիտորդների խումբ)՝ հարզացրույցների իրականացմանը աջակցելու խնդրանքով (Հավելված 1.6), որն իրականացվել է: Փաստացի, սույն ուսումնասիրությունը հնարավոր է եղել արդյունավետ կերպով իրականացնել Դիտորդների խմբի հետ համագործակցության արդյունքում:

Դատապարտյալների հետ հարցազրույցներն իրականացվել են պատահական ընտրության սկզբունքով՝ հաշվի առնելով անձանց մասնակցության ցանկությունը:
Նշված ծրագրին և ընթացքին առնչվող հիմնախնդիրները վեր հանելու, իրավիճակը համակողմանիորեն վերլուծելու և գնահատելու նպատակով՝ այլ

անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք է բերվել նաև գրավոր հարցումների միջոցով: Գրավոր հարցումներ են ուղարկվել ՀՀ Արդարադատության նախարարությանը (ԱՆ), Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի Նախարարությանը (ԿԳՄՍ), ինչպես նաև ՊՈԱԿ-ին:

Պետք է նշել, որ նշված ՊՈԱԿ-ի հետ համագործակցությունը գրությունների/հարցումների վերաբերյալ պատասխաններ ստանալու գործընթացում շատ բարդ է եղել: ՆՍՀԿ-ն ուղարկել է թվով 3 գրություններ և մշտապես ստիպված է եղել զանգերի կամ կրկնակի հարցման միջոցով խնդրել պատասխանել հարցումներին (Հավելված 1.5, 1.7, 1.8, 1.9): Հիմնականում հարցումների պատասխանները ստացվել են մեկից երեք ամսվա ընթացքում՝ խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Խնդիրներ են եղել նաև ԿԳՄՍՆ-ից տեղեկատվության ստացման հարցում: Կրթական բարեփոխման և ծրագրի իրականացման և առաջընթացի մանրամասների վերաբերյալ տեղեկատվության հարցում է ուղարկվել է ԿԳՄՍՆ՝ որպես կրթական ծրագրի մոնիտորինգի և իրականացման համար պատասխանատու կառույց՝ համաձայն Արդարադատության նախարարությունից ստացված տեղեկատվության և ուղղորդման:
Ի պատասխան՝ ԿԳՄՍՆ-ն նշել է, որ հարցերը վերաբերում են մինչև 19 տարեկան դատապարտյալներին և անհրաժեշտ է դիմել ԱՆ: ՆՍՀԿ-ն 2023թ.-ի դեկտեմբերի 28-ին կրկին գրություն է ուղարկել և շեշտադրել նախորդ գրությամբ հարցվող տեղեկատվության էությունը, որին ի պատասխան՝ ԿԳՄՍՆ-ն տրամադրել է միայն մասնակի տեղեկատվություն՝ տեղեկացնելով միայն կրթական ծրագրում ընդգրկված դատապարտյալների համար հասանելի էքստերն քննությունների մասին, և որ քննությունները հաջողությամբ հանձնածներին կտրամադրվեն վկայականներ:

Տեղեկատվության հարցման այլ հարցերի վերաբերյալ (կրթական բարեփոխման, ծրագրի իրականացման և առաջընթացի, մանկավարժների ընտրության և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման չափանիշների, ընթացակարգերի թափանցիկության, հանրակրթություն ստանալու կարիք ունեցող բոլոր դատապարտյալների ներգրավման խոչընդոտների, ծրագրում ընդգրկված դատապարտյալների ներկայիս թվի և այլ այլ հարցերի շուրջ մանրամասներ) տեղեկացրել են, որ դրանք գտնվում են ԿԳՄՍՆ իրավասություններից դուրս (Հավելված 1.3):
Այստեղ հարկ է նշել, որ ԱՆ և ԿԳՄՍՆ-ի միջև նկատվում է հաղորդակցության պակաս կամ կրթության բարեփոխումներին և ծրագրին առնչվող հարցերի պատասխանատվությունից/պատասխաններից խուսափելու փորձեր:

Տասնինը և բարձր տարիքի դատապարտյալների կրթության ոլորտի ներպետական կարգավորումները

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում անձի կրթության իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության հոդված 38-ով[3] ՝ **«Ցուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»**:
Տվյալ ոլորտում գրեթե ամբողջությամբ կարգավորումները սահմանված են «Կրթության մասին» ՀՀ օրենքով[4]:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ **ՀՀ-ում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:** Համաձայն նշված կարգավորման՝ **19 և բարձր տարիքի անձինք չեն կարող ստանալ տասներկուամյա միջնակարգ կամ նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն:**

Ազատությունից զրկված անձանց համար կրթության իրավունքի իրացման երաշխավորման, վերասոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով, ներպետական օրենսդրության մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ: Այդ փոփոխությունների հիմք է հանդիսացել **ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ին N 1717-Լ որոշմամբ հաստատված ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը (Ռազմավարություն)[5]:** Ռազմավարության Քրեակատարողական ոլորտի բաժնի 27-րդ կետը նվիրված է ՔԿՀ-ներում հանրակրթությանը, որի համաձայն՝ **ազատությունից զրկված անձանց (դատապարտյալների և /կամ կալանավորված անձանց) համար պետք է ապահովվի հանրակրթության իրականացում՝ անկախ տարիքից:** Միջոցառման կատարման ժամկետ է սահմանվել 2021-2023թթ.

Ռազմավարությամբ նախատեսված է եղել օրենսդրական փոփոխությունը իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա: Վերոնշյալ ռազմավարության հիման վրա՝ ԱՆ-ի և ԿԳՄՍՆ-ի կողմից մշակվել է օրենսդրական փոփոխության նախագիծ[6] և ներկայացվել վարչապետի աշխատակազմին: Արդյունքում, 2022թ.-ի մայիսի 25-ին ՀՀ նախագահի կողմից ստորագրվել է «Կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որն ուժի մեջ է մտել նույն թվականի օգոստոսի 1-ին[7]:

Նշված օրենսդրական ակտով կատարվել է հետևյալ փոփոխությունը. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ չորրորդ պարբերությունով.

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723
[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=178018
[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137161
[6] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ - e-draft.am
[7] https://www.arlis.am/documentview.aspx?docid=163715

«Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար սույն հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությունում նշված տարիքային սահմանափակումը չի տարածվում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի: Սույն պարբերությունում նշված անձինք իրենց ցանկությամբ կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին»:

«Հանրակրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջնակարգ կրթությունը պարտադիր է [8]: Հանրակրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները սահմանված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով և նույն հոդվածի 19-րդ մասով ամրագրված է սովորողների անհատական ուսուցման, ինչպես նաև դրսեկության ձևով հանրակրթության կազմակերպման կարգերը:

Ուլորտում որոշակի կարգավորումներ են ներառվել նաև ՀՀ նոր քրեակատարողական օրենսգրքում, որն ուժի մեջ է մտել 2022թ-ի հուլիսի 1-ին [9]: Նոր քրեակատարողական օրենսգրքի հոդված 112-ի 3-րդ մասի համաձայն՝ ***այն դատապարտյալը, որին պատժից ազատելու ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի, կարող է, անկախ տարիքից, օրենքով սահմանված կարգով իրացնել իր կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:***

Սակայն հարկ է նշել, որ նույն օրենսգրքի հոդված 43-ի 6-րդ մասով նշված է, որ դատապարտյալի համար մասնագիտական կրթական ծրագրեր չեն իրականացվում, իսկ հանրակրթությունն իրականացվում է միայն անչափահաս դատապարտյալների համար:

Քրեակատարողական օրենսգիրքը կարգավորում է նաև կրթության գործընթացում ընդգրկված դատապարտյալների՝ քննություններին մասնակցելու հետ կապված հարցերը, մասնավորապես՝ 112-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է սովորող և աշխատող դատապարտյալների քննություններ հանձնելու կապակցությամբ աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվելու մասին դրույթ՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության:

Սակայն պետք է նշել, որ մինչև 2024թ-ի հունվար ամիսը որևէ իրավական ակտով կարգավորված չի եղել հանրակրթության ծրագիրը ավարտած դատապարտյալներին տրամադրվող փաստաթղթի հետ կապված հարցերը: Այսպես, «Էքստեռն (դրսեկության) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը» (էքստեռն կարգ) հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1507-Ն

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=173821
[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164938

հրամանում 2024թ.-ի հունվարի 24-ին կատարվել է փոփոխություն, որը ուժի մեջ է մտել հունվարի 31-ին: Համաձայն փոփոխության՝ էքստեռն կարգով միջնակարգ կրթության ատեստատ կարող է ստանալ ՔԿՀ-ում պահվող անձը՝ կարգի պահանջներին համապատասխանելու դեպքում[10]: Իսկ համապատասխան միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար՝ անձինք պետք է հանձնեն էքստեռն ավարտական և պետական ավարտական քննությունները՝ ըստ սահմանված քննաշրջանների: Քննությունները կազմակերպվում են ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից:

Համաձայն քրեակատարողական օրենսգրքի հոդված 112-ի՝ ՔԿՀ վարչակազմը պետք է միջոցներ ձեռնարկի դատապարտյալի ֆորմալ կրթությունը՝ հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերով (հեռակա, մասնակի բեռնվածության, հեռավար ձևերով), ինչպես նաև ոչ ֆորմալ կրթությունն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

[10] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189173

Հանրակրթական ծրագիրը ՔԿՀ-ներում

ՔԿՀ-ներում հանրակրթություն իրականացնելու համար՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամաններով՝ ՊՈԱԿ-ը ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ:

ՀՀ ԱՆ-ի կողմից քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրականացվող շարունակական բարեփոխումների քաղաքականության արդյունքում 2019 թվականին կառավարության կողմից հաստատվել է «Ազատությունից զրկված անձանց (դատապարտյալների և /կամ կալանավորված անձանց) համար հանրակրթության իրականացում՝ անկախ տարիքից» միջոցառումը:

«Կրթության մասին» օրենքում 2022 թվականի մայիսի 25-ին ՀՕ-130-Ն փոփոխության համաձայն՝ հանրակրթություն ստանալու հնարավորություն ընձեռվեց 19 և բարձր տարիքի այն դատապարտյալներին, որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի: Նշված անձինք իրենց ցանկությամբ կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Վերոգրյալի արդյունքում՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2022 թվականի սեպտեմբերի 1-ից իրականացնում է ՔԿՀ-ներում ազատազրկման ձևով պատիժ կրող 19-ը և ավելի տարեկան» դատապարտյալների հանրակրթության ուսումնական՝ «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական **ծրագիրը**, որի տևողությունը 1,5 տարի է: ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է ոչ միայն միջնակարգ, այլ նաև տարրական և հիմնական կրթությունը: 2022թ.-ից ծրագիրը մեկնարկել է «Արմավիր», «Նուբարաշեն», «Արթիկ», «Աբովյան», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում:

Դատապարտյալների կրթության իրավունքի իրացման նպատակով, ըստ մամուլում հրապարակված տեղեկատվության՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից վերոնշյալ ՔԿՀ-ներում առանձնացվել և վերանորոգվել են ուսումնական սենյակներ, որոնց կահավորելու համար ձեռք է բերվել անհրաժեշտ ուսումնաօժանդակ գույք՝ ուսումնական սեղաններ, աթոռներ, գրատախտակներ, համակարգչային տեխնիկա և այլն, ինչպես նաև տրամադրվել են գրենական պիտույքներ և այլ նյութեր [11]: Հարցազրույցների ընթացքում պարզ է դարձել, որ որոշ ՔԿՀ-ներում դեռևս ավարտին չեն հասցվել նշված աշխատանքները:

ՔԿՀ-ներում իրականացվող հանրակրթական ծրագիրը՝ ըստ ՊՈԱԿ-ի, համապատասխանում է դպրոցական հանրակրթական ծրագրին, առկա է մեկ տարբերություն՝ ՔԿՀ-ներում հավելյալ ներառված է հոգեբանություն առարկան, որպեսզի դատապարտյալների վրա ունենա դրական ազդեցություն և հնարավորինս բացառվի հիմնարկի բացասական ազդեցությունը:

[11]https://lawinstitute.am/2022-%d5%a9%d5%be%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6%d5%ab%d5%b6-%d5%ab%d6%80%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6%d5%a1%d6%81%d5%be%d5%a1%d5%ae-%d5%a1%d5%b7%d5%ad%d5%a1%d5%bf%d5%a1%d5%b6%d6%84%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b0/

Հետազոտության արդյունքները

2024թ.-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Դիտորդների խմբի կողմից նշված ՔԿՀ-ներում իրականացվել են հարցազրույցներ հանրակրթական ծրագրում սովորող և ծրագրից դուրս մնացած/դուրս եկած անձանց, ինչպես նաև ՔԿՀ պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչների հետ:

Պաշտոնական հարցումով ՊՈԱԿ-ից ստացվել են ուսումնական տարիներին ծրագրերի մեկնարկի պահին ներգրավված դատապարտյալների քանակական տվյալները (Հավելված 1.9):
Ըստ տվյալների՝ 2022թ.-ին՝ ծրագրի մեկնարկի պահին, հանրակրթության կարիք է ունեցել 309, իսկ 2023թ-ին՝ 269 անձ: Ստորև աղյուսակով ներկայացվում է անձանց դիմելիությունը՝ ըստ ՔԿՀ-ների տվյալների.



Ուսումնասիրության ընթացքում արձանագրված իրավիճակը ներկայացված է ստորև.

Կազմակերպչական խնդիրներ:

Ծրագրի մասին իրազեկում

ՔԿՀ ընդունվելիս ՍՀԻԱ բաժինը, ի թիվս այլնի, տեղեկություն է հավաքագրում ազատազրկած անձի կրթության վերաբերյալ ևս, որով էլ արդեն իսկ ունեն տեղեկատվություն՝ թե որ դատապարտյալները չեն ստացել կամ կիսատ են թողել հանրակրթությունը: Եվ ըստ ՍՀԻԱ բաժինների, հաշվի առնելով նաև օրենսդրական պահանջը՝ պատժից ազատման ժամկետի լրանալուն մնացել է մեկ տարուց ավելի, իրականացվել է դատապարտյալների իրազեկումը:
ՔԿՀ-ներում հանրակրթական ծրագրի իրականացման ողջ ընթացքում ՊՈԱԿ-ին աջակցում է ՍՀԻԱ բաժինը:
2022 և 2023թթ.-ին ՔԿՀ-ներում հանրակրթական ծրագրերի մեկնարկից առաջ ՊՈԱԿ-ի կողմից տեղեկատվություն է ուղարկվել ՔԿՀ-ներ և ՍՀԻԱ բաժինը իրազեկել է դատապարտյալներին:
Միաժամանակ ՍՀԻԱ բաժինը հավաքագրում է հանրակրթության իրականացման միաժամանակ ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը և այն փոխանցում ՊՈԱԿ-ին:
Քանի որ հանրակրթական ծրագրում սովորելը կամավոր հիմունքներով է, ուստի 2022թ.-ին ծրագրերը մեկնարկել են այն ՔԿՀ-ներում, որտեղից որ դիմումներ են եղել: 2023թ.-ին նոր ՔԿՀ-ներ չեն ընդգրկվել՝ դիմումների բացակայության պատճառով:

Դասարանների արդյունավետ բաշխումը

Ծրագրում դիմորդների ներգրավվելուց հետո իրականացվում է դասարանների բաշխումը, որոնցում էլ անձինք շարունակում են կրթություն ստանալ:

Դատապարտյալները՝ ըստ էքստեռն կարգի միջնակարգ կրթության ատեստատ կարող են ստանալ եթե ունեն հիմնական կրթության վկայական: Ըստ այդմ էլ դասարանները տեղաբաշխվում են հիմնականի և միջնակարգի: Այն դեպքերում, երբ հայտնի չէ, թե անձը մինչև ազատազրկվելը ինչպիսի կրթական աստիճան է ունեցել /մինչև որ դասարան է հաճախել ըստ ՍՀԻԱ բաժինների ներկայացուցիչների հետ ունեցած հարցազրույցի արդյունքների՝ այդ տեղեկությունը ձեռք է բերվում դպրոցներին ուղարկվող հարցումների միջոցով:

Սակայն հարկ է նշել, որ ըստ ՊՈԱԿ-ից ստացված հարցման պատասխանի՝ սովորողներից մեկը չի մասնակցել էքստեռն ավարտական քննություններին հիմնական վկայականի պատճենի բացակայության պատճառով, և այս պայմաններում պարզ չէ, թե ինչպես է անձը, ընդհանրապես, ընդգրկված եղել ծրագրում, քանի որ միջնակարգ կրթություն ստանալու համար՝ պարտադիր պահանջ է հիմնական կրթությունը հավաստող փաստաթղթի առկայությունը:

ՔԿՀ-ներում արձանագրվել է, որ դասարաններում ներգրավված են նաև միջինից բարձր տարիքի անձինք, ովքեր անտառաճանաչ են, և արդյունքում, մյուս սովորողների համար անհետաքրքիր է դառնում կրթական գործընթացը, քանի որ ստիպված են լինում սպասել այնքան, մինչև անձը/անձինք սովորի/սովորեն կա՛մ գրել, կա՛մ որոշակի տառեր: Հարցվողներից մեկը նշել է՝ «Ուսուցիչները մատչելի են բացատրում, սակայն շատերը չեն ընկալում, քանի որ խմբերը՝ ըստ դասարանների են, մեկը կա՝ կարողանում է ընկալել, մյուսը՝ չէ, և դա պատճառ է հանդիսանում, որ որոշ մարդիկ դուրս գան ծրագրից, քանի որ իրենց համար արդեն անհետաքրքիր է»:

Այլ ՔԿՀ-ներում հարցազրույցի մասնակիցներից մի քանիսը նշել են՝ «Դասերին մասնակցելը հետաքրքիր է, դասերի ժամանակ ուսուցիչների հետ խոսում ենք ոչ միայն դասերից, այլ նաև առօրյա կյանքից, որը մեզ համար մեծ նշանակություն ունի, քանի որ հոգեբանական աջակցություն է նաև»:

Միաժամանակ հարկ է նշել, որ ըստ ՊՈԱԿ-ի ներկայացուցչի հետ հարցազրույցի արդյունքների՝ դիմում ներկայացրած դատապարտյալները անցնում են գնահատման թեստ՝ որոշելու կրթական մակարդակը, սակայն այդ գնահատումը իրականացվում է մինչև 19 տարեկան անձանց համար նախատեսված գործիքով, որով հնարավոր չէ բացահայտել 19 և բարձր տարիքի անձանց կարիքները, ուստի այդ գործիքի կիրառման ընթացքում արձանագրվել է նոր գործիքի անհրաժեշտությունը:

Մտահոգիչ է, որ խմբերը բաշխելիս հաշվի չեն առնվում անձանց փաստացի կրթական մակարդակները, տարիքային տարբերությունները, որոնք էլ որոշ դեպքերում պատճառ է հանդիսանում կրթության ընդհատման: ՊՈԱԿ-ի վերականգնողական ծրագրերի և հանրակրթության բաժնի պետ Հասմիկ Հովակիմյանի հետ հարցարզրույցի ընթացքում վերջինս նույնպես ընդգծել է կրթական կարիքի գնահատման նոր գործիքակազմի անհրաժեշտությունը:

Գործընթացի արդյունավետ կազմակերպման համար՝ անհրաժեշտ է ներդնել նոր գործիք և դասարանների տեղաբաշխումը իրականացնել՝ հաշվի առնելով անձանց փաստացի կրթական մակարդակը:

Դասասենյակների կահավորվածությունը

«Սևան» ՔԿՀ կատարած այցի պահին շահագործվել են դասասենյակներից երկուսը, իսկ երրորդը գտնվել է վերանորոգման ընթացքի մեջ: Ոչ բոլոր ՔԿՀ-ներն են հարմարեցված, ինչպես նաև կահավորված: Օրինակ «Արթիկ» ՔԿՀ-ում անհրաժեշտ նյութերը կան, սակայն որոշ դասասենյակները կահավորված չեն, սենյակներից որոշները գտնվում են անմխիթար վիճակում:

Գույքով ապահովման անհնարինությունը

ՔԿՀ-ներում դատապարտյալները ապահովված են անհրաժեշտ բոլոր նյութերով՝ գրքեր, տետրեր, գրիչներ և այլն: Այս մասով արձանագրվել է հետևյալը.

Բոլոր ՔԿՀ-ներում դասապրոցեսի համար անհրաժեշտ որոշակի նյութերի առկայությունը և դրանց օգտագործումը արգելված է՝ անվտանգության նկատառումներից ելնելով, մասնավորապես՝ դրանք փորձարկումներ իրականացնելու համար անհրաժեշտ քիմիական նյութերն են: Ուստի այդ առարկաների դասաժամերը սահմանափակվում են տեսական գիտելիքներով:

Դատապարտյալներից ոմանք նշել են, որ երբեմն իրենք են տետրեր և գրիչներ ձեռք բերում: Իսկ «Արմավիր» ՔԿՀ-ում արձանագրվել է, որ որոշ դատապարտյալներին ՊՈԱԿ-ը թույլ չի տալիս դասագրքերը իրենց մոտ պահել, քանի որ մտավախություն ունեն այդ դատապարտյալների կողմից դրանց անփույթ օգտագործման և դասերի վերջում ուսուցիչները հավաքում եմ դասագրքերը: Որպեսզի անձինք ունենան դասերի նյութերը, ուսուցիչները թելադրում են դասերը, որի վրա բավականին շատ ժամանակ է ծախսվում:

Դատապարտյալները պետք է հասանելիություն ունենան գրադարանին և ազատորեն օգտվեն գրականությունից: Այն դեպքերում, երբ կա հիմնավոր կասկած՝ դատապարտյալի կողմից գույքի անփույթ օգտագործման հետ կապված, ապա պետք է օրենսդրական մեխանիզմները գործի դրվեն:

Հանրակրթության գործընթացում անհրաժեշտ նյութերը, գրենական պիտույքները և այլ իրեր ձեռք են բերվում ՊՈԱԿ-ի կողմից՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Դասացուցակներ:

Ըստ ՊՈԱԿ-ի՝ ՔԿՀ-ներում դասացուցակները կազմվել են՝ հաշվի առնելով նաև ՔԿՀ-ների ներքին կանոնակարգերը: Սակայն այս մասով ևս կան արձանագրված խնդիրներ: Մասնավորապես. դասերին ուղեկցումները կատարում են ՔԿՀ վարչակազմի աշխատակիցները: Գրեթե բոլոր հիմնարկներում առկա է աշխատակազմի խնդիր, և թափուր հաստիքների պատճառով ուղեկցումները երբեմն ուշացումներով են լինում: «Արմավիր» և «Արթիկ» ՔԿՀ-ում դասերը սկսվում են 10:20-ից, սակայն աշխատակիցները մինչև 10:30-ը իրենց ամենօրյա ստուգումներին են լինում, որի պատճառով

առավոտյան դասերին անձինք ուշացումներով են ներկա լինում: Այլ հիմնարկներում էլ են որոշակի խնդիրներ լինում ուղեկցումների հետ կապված, սակայն դրանք հաճախակի բնույթ չեն կրում:

Ուսուցիչների ընտրության կարգը

Ուսումնասիրվել է նաև ուսուցիչների ընտրության կարգը: Ծրագրի մեկնարկից և դրանից հետո որոշ ժամանակ ուսուցիչների խնդիր է եղել՝ թափուր տեղեր են եղել, որոնք ընթացքում լուծվել են: Ուսուցիչների ընտրության գործում՝ որպես չափորոշիչ հաշվի են առնվել մարդկային որակները և մասնագիտական կարողությունները:

«Վանաձոր» ՔԿՀ-ում արձանագրվել է, որ տվյալ հաստիքը ամիսներ շարունակ թափուր լինելու պատճառով, այն համալրելու նպատակով նույն հիմնարկի աշխատակցուհին, Արդարադատության նախարարության հետ համաձայնության արդյունքում, ընտրվել է՝ որպես կենսաբանության/քիմիայի ուսուցչուհին:

«Վանաձոր» և «Արթիկ» ՔԿՀ-ներում ուսուցիչները նշել են, որ վերապատրաստում չեն անցել, բայց ցանկալի կլիներ՝ անցնեին:

ՔԿՀ-ում հանրակրթության ծրագրերի հաջողությունը մեծամասամբ կախված է նաև մանկավարժներից: ՔԿՀ-ում դասավանդող ցանկացած մանկավարժի հիմնական նպատակը պետք է լինի սովորող դատապարտյալին՝ որպես գրագետ, հոգեպես կայուն մարդ վերադարձնել հասարակությանը: Այս աշխատանքը շատ բարդ է, մանկավարժից պահանջվում է հանդուրժողականություն, համբերատարություն և արդարություն անձանց նկատմամբ: Հարցազրույցների ընթացքում արձանագրված հարցվողների կարծիքները և 2023թ.-ի դեկտեմբեր ամսին «Արթիկ» ՔԿՀ-ում ուսուցչի կողմից դատապարտյալին արգելված իրի փոխանցման փորձը[12] ևս մեկ անգամ փաստում են ուսուցիչների վերապատրաստման, վերջիններիս՝ ՔԿՀ-ներում աշխատանքի կարևորության և առանձնահատկությունների ներկայացման անհրաժեշտությունը:

Կազմակերպչական խնդիրների տեսանկյունից կարևոր է ՊՈԱԿ-ՍՀԻԱ բաժինների համագործակցության արդյունավետությունը, որը կնվազեցնի խնդիրները:

Դասերի հեռավար կազմակերպումը

Գտնվելով անազատության մեջ՝ դատապարտյալները հաճախ զրկվում են մի շարք կրթական միջոցառումներին ֆիզիկապես մասնակից լինելուց: Այդ խնդիրների լուծման նպատակով ներդրվել են հեռակա ուսուցման մեթոդները, որոնք ամրագրված են նաև քրեակատարողական օրենսդրությամբ Ներկայումս մեծ թվով դատապարտյալներ կարողանում են սովորել և ավարտել բարձրագույն ուսումնական հաստատությունները շնորհիվ հեռավար ուսուցման:

ՔԿՀ-ներում ներդրված հանրակրթական ծրագրի դասերին, ինչպես նաև քննություններին հնարավոր է մասնակցել միայն ֆիզիկապես, որն է ծրագրի իրականացման ընթացքում որոշակի խնդիրներ է առաջացրել առողջական խնդիրներ ունեցող դատապարտյալների համար:

[12] https://arm.sputniknews.ru/20231205/artik-qkhum-usucichy-pvordzel-e-kaskatseli-zangvatsvov-21-glanak-pvokhancel-datapartjalin-69661605.html

Մասնավորապես՝ ՔԿՀ-ում սովորողներից մեկը տեղափոխվել է «ԴՀ» ՔԿՀ, որտեղ երեք ամսից ավելի գտնվել է բուժման մեջ, և այդ ընթացքում դասերին չի մասնակցել: Չնայած նրան, որ դիտարկման պահին արձանագրվել է մեկ դեպք, սակայն չի բացառվում նմանատիպ բազմաթիվ դեպքերի առկայությունը կամ կրկնությունը:

«Արթիկ» ՔԿՀ-ում էքստեռն ավարտական քննությունների ժամանակ երկու անձինք չեն կարողացել մասնակցել քննություններին առողջական վիճակի պատճառով՝ անձանցից մեկը չի կարողացել երկար ճանապարհ գնալ, իսկ մյուսը տեղաշարժման խնդիր է ունեցել, արդյունքում անձինք, հանգամանքներից ելնելով, այդ փուլում ստիպված դուրս են մնացել ծրագրից՝ հետևաբար զրկվելով իրենց իրավունքի իրացման հնարավորությունից:

Պետք է նշել, որ ՔԿՀ-ներում կրթական ծրագրերի հեռավար կազմակերպման հնարավորությունը շատ կարևոր նշանակություն ունի, քանի որ անձինք գտնվում են անազատության մեջ:
2020թ.-ին ՀՀ-ում նույնպես տարածվեց նոր կորոնավիրուսային հիվանդությունը, և դրանով պայմանավորված՝ սահմանափակվեց մարդանց տեղաշարժը: Այդ պայմաններում դպրոցները անցան հեռավար ուսուցման: ՔԿՀ-ներում նույնպես կարելի է կիրառել նույն մեխանիզմները և ներդնել այդ հնարավորությունը:

Թեպետ, ուսումնասիրություններ ընթացքում ուսուցիչների կողմից դասերից ուշանալու կամ բացակայելու դեպքեր չեն բացահայտվել, այդուհանդերձ, կրթության՝ հեռավար կազմակերպման ձևաչափի խրախուսումը նաև ուսուցիչներին կազատի ՔԿՀ անհարկի այցելելու պարտականությունից,
կստեղծի առավել լայն հնարավորություններ թե՛ ուսուցիչների, և թե՛ աշակերտների համար:

[12] https://arm.sputniknews.ru/20231205/artik-qkhum-usucichy-pvordzel-e-kaskatseli-zangvatsvov-21-glanak-pvokhancel-datapartjalin-69661605.html

Խոցելի խմբերի անձանց կրթությունը

Երեխա ունեցող կանայք

Համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ մայրերը կարող են իրենց մոտ պահել երեխային միչև վերջինիս 6 տարեկանը լրանալը, և համաձայն նույն օրենսգրքի 90-րդ հոդվածի՝ ՔԿՀ-ում, անհրաժեշտության դեպքում, ստեղծվում է մանկան տուն՝ երեխաների բնակության և զարգացման պատշաճ պայմաններով, սակայն որևէ իրավական ակտով ամրագրված չէ մանկան տան ստեղծման կարգը և դեպքերը: Փաստացի եթե լինի նման կարգավիճակում գտնվող կին սովորող, ապա վերջինիս կրթությունը խնդրահարույց կլինի:

Առողջական խնդիրներ ունեցող անձինք:

Առողջական վիճակով պայմանավորված դասերի մասնակցության խնդիրներ ևս արձանագրվել են: Մասնավորապես մտահոգիչ է ներառական կրթության կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման հարցերը: Թեև ՊՈԱԿ-ից ստացված հարցման պատասխանում նշվել է, որ մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվել է ծրագրի սովորողների գնահատում, որի արդյունքներից պարզ է դարձել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ չկան (Հավելված 1.9), սակայն ՆՍՀԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ կան նման կարիք ունեցող անձինք, և այս ուղղությամբ անհրաժեշտ է աշխատանքներ տանել:

Խնդիրներ են արձանագրվել ներառական կրթության կարիք ունեցող անձանց շրջանում իրազեկման մասով: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում հիմնարկը ՊՈԱԿ-ին տեղեկացրել է որոշ անձանց ներգրավելու աննպատակահարմարության մասին, սակայն անձինք ներգրավվել են և որոշ ժամանակ անց ինքնակամ դուրս եկել ծրագրից: ՍՀԻԱ բաժինը հայտնել է, որ դրա պատճառը եղել է անձանց մտավոր խնդիրները, որով պայմանավորված դասերը չեն ընկալել և հետագայում ինքնակամ դուրս են եկել ծրագրից:

Իսկ պատժախցում գտնվող անձինք պատժախցում գտնվելու ընթացքում չեն մասնակցում դասերին:

ՔԿՀ-ներում առկա նման մոտեցումը և իրավիճակը կոպիտ կերպով խախտում է մարդու իրավունքները, տվյալ դեպքում խոչընդոտ է հանդիսանում կրթության իրավունքի իրացմանը: Ուստի, դատապարտյալների շրջանում կրթական գիտելիքների ապահովումը և խտրականության բացառումը ապահովելու համար՝ անհրաժեշտ է իրազեկման հստակ մեխանիզմներ սահմանել և ապահովել անձանց ներառական կրթությունը:

Ներառական կրթության ապահովման մասով կարևոր է նաև 19 և բարձր տարիքի անձանց համար իրավական կարգավորումների անհրաժեշտությունը, քանի որ գործող օրենսդրությամբ առկա կարգավորումները վերաբերում են միայն երեխաներին:

Վերոնշյալ խնդիրների լուծման պարագայում միայն կրթության բոլոր ձևերը կարող են հասանելի լինել ՔԿՀ-ներում:

Կրթական ծրագրին խոչընդոտող գործոնները

Ուսումնասիրության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել նաև այն խնդիրներին, որոնց պատճառով շատերը չեն ընդգրվկել ծրագրում: Արձանագրված խնդիրներից են՝

Աշխատանք

Հարցազրույցների համաձայն՝ շատերը ՔԿՀ-ներում ներգրավված են վճարովի աշխատանքներում և ժամային գրաֆիկի անհամապատասխանության պատճառով չեն ներգրավվել ծրագրում: ՔԿՀ-ներում կան այնպիսի աշխատանքներ, որոնցում անձինք աշխատում են լրիվ դրույքով, և դա նրանց հնարավորություն չի տալիս՝ ներգրավվելու ծրագրում: Ներգրավվելու դեպքում պետք է աշխատաժամանակի կրճատում իրականացվի, իսկ դա էլ ենթադրում է աշխատավարձի կրճատում, ինչը դատապարտյալները չեն ցանկանում: Համատեղելիության անհնարինության պայմաններում անձինք ընտրում են աշխատանքը:

Կարծրատիպեր

Դատապարտյալներից նշել են, որ ծրագրում չներգրավվելու խնդիրներից է ազատազրկված անձանց մտածելակերպի խնդիրը՝ սովորելը հարիր չէ իրենց:

Տարիքային անհամապատասխանություն

Դատապարտյալները նշել են, որ «տարիքով դատապարտյալներից շատերը ամաչում են երիտասարդների հետ սովորել», ուստի չեն ցանկանում ծրագրում ընդգրկվել:

Դասասենյակներ:

«Սևան» ՔԿՀ-ում նշել են, որ առկա է դասասենյակների խնդիր, և նոր խմբերի ձևավորման դեպքում տեղ չի լինի:

Պայմանական վաղաժամկետ ազատման դիմումների մերժումները

Դատապարտյալները նշել են, որ տեսնելով կրթության մեջ ներգրավված անձանց վաղաժամկետ ազատման դիմումները մերժվում են, մոտիվացիա չեն ունենում՝ ծրագրում ներգրավվելու համար:

Ծրագրից սովորողների դուրս մնալու պատճառները

ՊՈԱԿ-ից ստացվել և ամփոփվել են նաև ծրագրից դուրս մնացած անձանց մասով վիճակագրական տվյալները, որոնց համաձայն՝ 2022-2023թթ ուստարում ծրագրից դուրս են մնացել 32, իսկ 2023-2024թթ-ին 25 դատապարտյալ, ինչպես նաև եղել են պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալներ (Հավելված 1.9): Ստորև աղյուսակով ներկայացվում են հանրակրթական ծրագրից դուրս մնալու պատճառները.



Ըստ վիճակագրության՝ մեծ թիվ են կազմում անհարգելի բացակայությունների հիմքով ՊՈԱԿ-ի կողմից հեռացումները ծրագրից: Ըստ հարցազրույցների՝ արդյունքերի բացակայությունների պատճառները տարբեր են, մի մասը կապված է աշխատող անձանց աշխատանքի բնույթով: Թեև ՊՈԱԿ-ի, ՍՀԻԱ բաժնի և ՔԿՀ-ի կողմից ցուցաբերվում է որոշակի աջակցություն աշխատող դատապարտյալներին, սակայն, մեծ հաշվով, անձինք կանգնում են երկընտրանքի առջև՝ աշխատանք կամ կրթություն: Բայց նաև պետք է նշենք, որ կան ծրագրում ներգրավված աշխատող դատապարտյալներ, և թե՛ ՊՈԱԿ-ը, թե՛ ՍՀԻԱ բաժինը, թե՛ ՔԿՀ-ն աջակցում են անձանց, որպեսզի կրթությունից դուրս չմնան, ինչպես նաև աշխատեն: Օրինակ՝ փորձում են աշխատանքի հերթափոխը փոխել, դասաժամերի ընթացքում ծրագրում ներգրավված դատապարտյալին աշխատանքում փոխարինել այլ դատապարտյալով, որպեսզի անձը հնարավորություն ունենա դասերին մասնակցել: Նման դատապարտյալները, հիմնականում, զբաղվում են ճաշերի բաժանման աշխատանքով: Սակայն առկա է նաև հակառակ պատկերը, երբ անձինք դուրս են մնացել ծրագրից, քանի որ կատարում են այնպիսի աշխատանքներ, որտեղ իրենց չեն կարող փոխարինել՝ հանձնուքներ բաժանող, էլեկտրիկ և այլն, որի արդյունքում այդ անձանց բացակայությունը շատ են եղել դասերից, և ՊՈԱԿ-ը ծրագրից հեռացրել է անձին:

Հաշվի առնելով, որ աշխատանքը դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացում կարևոր գործոններից մեկն է՝ կարևոր է խրախուսել դատապարտյալներին և փորձել դասացուցակների կազմման ընթացքում հաշվի առնել նաև վերջիններիս աշխատանքային զբաղվածությունը:

Հարցազրույցների ընթացքում փորձ է կատարվել վեր հանել սեփական դիմումի համաձայն ուսման դադարեցման պատճառները ևս: Այսպես, հետազոտության արդյունքները վկայում են, որ իրենց կամքով կրթական ծրագրից դուրս գալու պատճառները հիմնականում հետևյալն են .

- **Առողջական վիճակ,**
- **Սովորելու ցանկության բացակայություն,**
- **Ներառական կրթության բացակայություն,**
- **Պայմանական վաղաժամկետ ազատման դիմումների մերժումներ:**

Դատապարտյալների մեծամասնությունը ծրագրում ներգրավվել են պայմանական վաղաժամկետ ազատման համար բալեր հավաքելու նպատակով, սակայն հաճախ անձանց վաղաժամկետ ազատման դիմումները մերժվել են: Դա տեսնելով՝ այլ դատապարտյալներ չեն ցանկացել ներգրավվել ծրագրում, իսկ մերժման դիմումներ ստացածներ մի քանի դատապարտյալներ դադարեցրել են ուսումը:

Համաձայն հարցազրույցների արդյունքների՝ և՛ ՊՈԱԿ-ի, և՛ ՍՀԻԱ բաժնի կողմից ծրագրից դուրս մնացած անձանց հետ աշխատանք տարվել է, փորձել են հասկանալ խնդիրը և նրանց վերադարձնել կրթական ծրագիր:

Դատապարտյալների վերասոցիալականացումը կարող է շատ ավելի դժվար լինել առանց կրթության նկատմամբ նրանց պատրաստակամության: Այդ նպատակին հասնելու համար՝ ՔԿՀ-ներում պետք է ներդրվեն այնպիսի գործիքակազմեր, որոնք կարող են մոտիվացնել դատապարտյալներին: Օրինակ՝ կարող են ներդրվել միջազգային պրակտիկայում կիրառված խրախուսման մեթոդները:
Խոսելով դատապարտյաների կողմից կրթության պատրաստակամության մասին՝ կարևոր է նաև պետական կառույցների կողմից կրթության դերի գնահատման և դրա նկատմամբ դատապարտյալների մոտիվացիայի բարձրացման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը, քանի որ փաստացի իրավիճակը ցույց է տալիս, որ պատկան մարմինների կողմից անտեսվում է անձի կրթության մեջ ներգրավվելու հանգամանքը:

Հաշվի առնելով, որ դատապարտյալների պայմանական վաղաժամկետ ազատման դիմումները հաճախ մերժվում են կամ ՔԿ հիմնարկի վարչակազմի կամ հենց դատարանների կողմից, անհրաժեշտ է նորովի վերանգնահատել կրության դերն ու նշանակությունը անձի վերասոցիալականցման գործում, ի թիվս այլոց մրցունակ բալեր տալով հենց կրթության կազմակերպմանը կամ մասնակցությանը:

Կրթության շարունակականության հիմնախնդիրները

Ուսումնասիրության ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել հանրակրթական ծրագիրը ավարտելու դեպքում անձանց տրամադրվող փաստաթղթին: Ուսումնասիրության սկզբնական փուլում պարզ է դարձել, որ այդ հարցը բաց է, քանի որ օրենսդրական որևէ կարգավորում առկա չի եղել: Միայն 2024թ.-ի հունվարին լուծվել է անձանց տրամադրվող փաստաթղթի՝ ատեստատի, հետ կապված հարցերը, ինչի արդյունքում միջնակարգ կրթության ատեստատ կարող են ստանալ էքստեռն ավարտական և պետական քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո:
2024թ.-ի փետրվար-մարտ ամիսներին անցկացվել են 2022թ-ին ընդունված սովորողների էքստեռն ավարտական քննությունները: Քննությունները կազմակերպվել են «Սևան», «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում, և անձինք տեղափոխվել են այդ ՔԿՀ-ներ՝ քննություններին մասնակցելու նպատակով:
ՔԿՀ-ներում Դիտորդական խմբի կողմից հարցազրույցներ իրականացնելու ժամանակ ընթացքի մեջ են եղել էքստեռն ավարտական քննությունները: Քանի որ անձինք կարող են վկայական/ատեստատ ստանալ միայն պետական ավարտական քննությունների ժամանակ բավարար գնահատականներ ստանալուց հետո, ստացվում է, որ ևս մի քանի ամիս պետք է սպասեն պետական ավարտական քննությունների մեկնարկին: Այս կարգավորումը լուրջ մտագոհության տեղիք է տալիս, քանի որ այդ ամիսների ընթացքում շատերը կարող են պայմանական վաղաժամկետ ազատվել, կամ առողջական վիճակի պատճառով պատժի կրումը կարող է անհամատեղելի ճանաչվել, և անձը վաղաժամկետ ազատվի ՔԿՀ-ից՝ ուսումը կիսատ թողնելով, առանց քննություն հանձնելու և ատեստատ ստանալու: Օրինակ՝ 2022-2024թթ.-ին պայմանական վաղաժամկետ ազատվել են ուսումը կիսատ թողած 14 դատապարտյալ:

2024թ.-ին ավարտական քննություններին մասնակցած անձանցից 27-ը ստացել է բավարար գնահատական: Չի բացառվում, որ մինչև պետական ավարտական քննությունները այդ անձանցից որոշները ևս պայմանական վաղաժամկետ ազատվեն և անցնեն պրոբացիայի հսկողության ներքո կամ այլ հիմքով պատժի կրումից վաղաժամկետ ազատվեն: *Քանի որ պրոբացիայում մեխանիզմներ չկան՝ ուսման շարունակականության ապահովման համար, ուստի կարևոր է պայմանական վաղաժամկետ ազատվող անձանց համար նախատեսել հետպատժյա փուլում աշխատանքների իրականացում, որը հնարավորություն կտա անձանց շարունակել և ավարտել կրթական գործընթացը:*
Էքստեռն պետական քննությունների ընթացքում, հարցումով ՊՈԱԿ-ից ստացված պատասխանի համաձայն՝ քննության մասնակցության դիմում են ներկայացրել 38 անձ, որից 3-ը հրաժարվել է, 1-ը չի մասնակցել՝ հիմնական կրթության վկայականի պատճենը չունենալու, 1-ը՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու պատճառով:

Միջազգային փորձ

Միջազգային պրակտիկայում կրթության վերաբերյալ հիմնական սկզբունքներն ամրագրված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով՝ «Ոչ ոք չպետք է զրկվի կրթության իրավունքից»[13]: Բանտային կրթության եվրոպական ասոցիացիան ընդգծել է բանտային կրթությունը՝ որպես բարոյական իրավունք, որը բավարարում է մարդու հիմնական կարիքները: Քանի որ դատապարտյալները որոշակի երկրի քաղաքացիներ են, և բոլոր քաղաքացիներն ունեն կրթության իրավունք իրենց ողջ կյանքի ընթացքում՝ ապահովելու իրենց համակողմանի զարգացումը, հետևաբար՝ բանտարկյալներին պետք է առաջարկվի սովորելու հնարավորություն[14]:

«Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի կոնվենցիայի (ՀՀ-ում ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 5-ից) նպատակների համար «կրթություն» հասկացությունը վերաբերում է կրթության բոլոր տեսակներին ու մակարդակներին և ներառում է կրթություն ստանալու հնարավորությունը, կրթության ստանդարտն ու որակը, ինչպես նաև կրթություն տալու պայմանները:

ՄԱԿ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (այսուհետ՝ Մանդելայի կանոններ) առանձին բաժին նվիրված է դատապարտյալների կրթությանը՝ «Կրթություն և ժամանց» վերտառությամբ 104-105 հոդվածներ): Դրանք սահմանում են, որ դատապարտյալներին պետք է հնարավորություն տրվի հետագա կրթության, անտառաճանաչների և երիտասարդների կրթությունը պետք է համարվի պարտադիր, և բանտի ղեկավարությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի դրան: Բանտարկյալների կրթությունը, հնարավորության դեպքում, պետք է կապված լինի երկրում գործող կրթական համակարգի հետ, որպեսզի ազատ արձակված բանտարկյալները կարողանան առանց բարդությունների շարունակել իրենց ուսումը:

Բանտարկյալների կրթությանը վերաբերող հատուկ փաստաթուղթ է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(89)12 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին բանտերում կրթության վերաբերյալ (13 հոկտեմբերի 1989 թ.): Այս ակտում կոմիտեն ընդունում է, որ կրթության իրավունքը հիմնարար իրավունք է, և կրթությունն ինքնին կարևոր դեր է խաղում անհատի և հասարակության զարգացման գործում: Դատապարտյալների համար կրթության նպատակահարմարության մասին թեզի օգտին լրացուցիչ փաստարկ է նրա սահմանումը՝ որպես ռեժիմի մեղմացման և կալանքի պայմանների բարելավման միջոց, ինչպես նաև այն, որ բանտերում կրթությունը բանտարկյալների վերադարձը հասարակությանը հեշտացնելու կարևոր միջոց է: Բանտարկյալների կրթությունը պետք է նման լինի այն կրթությանը, որը նույն տարիքի ներկայացուցիչները ստանում են բանտից դուրս, և բանտարկյալների համար կրթական հնարավորությունների շրջանակը

[13] https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870
[14] Costelloe, A., Warner, K. (2008) Beyond Offending Behaviour: T he Wider Perspectives of Adult Education and the European Prison Rules. In Wright, R. (Eds.). In the Borderlands: Learning to Teach in Prisons and Alternative Settings, 3rd edition. San Bernardino: California State University // http://www.epea.org/images/kwa/Kevin_Warner_Anne_Costello_Chapter_XII.pdf

պետք է հնարավորինս լայն լինի: Համաձայն նշված հանձնարարականով սահմանված կանոնների՝ բանտերում կրթությունը պետք է իրականացվի համակողմանիորեն՝ հաշվի առնելով անհատի սոցիալական, տնտեսական և մշակութային մակարդակը:

Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ ազատությունից զրկման ցանկացած վայրում պետք է ապահովվեն ազատությունից զրկված բոլոր անձանց հասանելիությունը կրթական ծրագրերին՝ հնարավորինս ապահովելով դրանց բազմակողմանիությունը և հաշվի առնելով անձի անհատական պահանջմունքներն ու ցանկությունները: Համաձայն այդ կանոնների մոդելի և պատժի նպատակի, որը ներառում է նաև բանտարկյալներին բանտից դուրս կյանքին նախապատրաստելը, անհրաժեշտ է սահմանափակել ազատազրկման բացասական հետևանքները և վերացնել բանտային կյանքի և դրսի կյանքի միջև եղած տարբերությունները:

Ընդհանուր առմամբ, եվրոպական երկրներում բանտային կրթությունը դիտարկվում է որպես կրկնահանցագործությունները կանխելու լավագույն միջոց և բանտարկյալներին ազատության մեջ ավելի լավ կյանքի նախապատրաստելու գործիք: Լավ կազմակերպված ուսումը բարելավում է աշխատաշուկայում հնարավորությունները և նպաստում բանտարկյալների երկարաժամկետ սոցիալական ինտեգրմանը:

Եվրոպայում բանտային կրթության հասանելիությունը տարբեր երկրներում տարբեր է:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում պատիժ կրող բանտարկյալների կրթական հնարավորությունները շատ սահմանափակ են: Կրթության հետ կապված գործունեությունը շատ հաճախ սահմանափակվում է հեռուստացույց դիտելով և կարդալով:

Մինչդեռ, Արևմտյան Եվրոպան տարբեր պայմաններ է առաջարկում բանտարկյալների համար: Օրինակ՝ Իտալիայում, Դանիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում բանտարկյալներին հնարավորություն է տրվում սովորել և շարունակել կրթությունը:

Ներկայումս ԱՄՆ-ի, Կանադայի, եվրոպական մի շարք երկրների՝ Շվեյցարիայի, Դանիայի, Հունաստանի և այլ երկրների ՔԿՀ-ներում իրականացվում են հանրակրթական ծրագրեր տարբեր տարիքային խմբերի բանտարկյալների համար: Երկրների մեծ մասում կրթությունը հիմնականում կամավոր է, օրինակ Լեհաստանում[15], Իսպանիայում, Ուկրաինայում[16] և այլն: Մեծամասամբ, բոլոր երկրներում մինչև 18 տարեկանը հանրակրթությունը պարտադիր է բոլորի համար: Բացառություն են Դանիան և Շվեդիան: Դանիայում այն պարտադիր է մինչև 30 տարեկանը[17] , իսկ Շվեդիայում՝ մինչև 35 տարեկանը[18]: Նորվեգիան 1851.թ բացել է իր առաջին բանտը՝ կենտրոնանալով կրթության վրա՝ որպես վերականգնողական ձևի, և դարավերջին օրենսդրությունը երաշխավորեց, որ ցանկացած բանտարկյալ, ով չի ավարտել տարրական և կրտսեր միջնակարգ դպրոցը, պետք է դա անի բանտում գտնվելու ժամանակ:

Այն երկրներում, որտեղ հանրակրթությունը կամավոր է, դատապարտյալի

[15] https://www.sciencedirect.com/science/article/pii/S2590291120300425
[16] https://zakon.rada.gov.ua/laws/show/2145-19#Text
[17] Тюремное образование - Prison education// https://wiki5.ru/wiki/Prison_education
[18] http://scindeks.ceon.rs/article.aspx?query=ISSID%26and%269246&page=7&sort=8&stype=0&backurl=%2Fissue.aspx%3Fissue%3D9246%26lang%3Den&lang=en

ուսումնական հաստատություն ընդունելը կատարվում է նրա դիմումի հիման վրա: Ուկրաինայում անձանց դիմումին կցվում է հանրակրթական միջնակարգ կրթության համապատասխան մակարդակը հաստատող փաստաթուղթ: Եթե դատապարտյալը չունի նման փաստաթուղթ, ապա նա անցնում է կրթական գիտելիքների վերջնական (տարեկան) գնահատում և/կամ պետական ավարտական ատեստավորում (այսուհետ՝ ատեստավորում), որից հետո ընդունվում է ուսումնական հաստատություն: Եթե համապատասխան երկրում կրթությունը պարտադիր է, ապա ընդունելությունը տեղի է ունենում առանց բացառության՝ ընդունելության թեստի հիման վրա: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում բանտ ընդունվելու առաջին մի քանի օրերին կարող են պահանջել թվաբանության և գրագիտության թեստեր հանձնել: ԱՄՆ-ում բանտարկյալները, ովքեր չունեն ավագ դպրոցի փաստաթուղթ, պետք է մասնակցեն հատուկ կրթության (GED) դասընթացներին իրենց բանտի կրթության վարչության միջոցով: Դա չկատարելը համարվում է խախտում և առաջացնում է պատասխանատվություն: Միացյալ Նահանգներում ՔԿՀ ընդունված բոլոր անձինք թեստավորվում են՝ որոշելու նրանց գիտելիքների մակարդակն ու ակադեմիական կարողությունները, ինչպես նաև հերթագրվում են ընդունելության համար: Այս ընթացակարգի ավարտից հետո դատապարտյալները դասերի են ներգրավվում՝ հիմնվելով իրենց գիտելիքների բազայի վրա, և անցնում են ընթերցանության, ըմբռնման, գրավոր և թվաբանական հմտությունների վերապատրաստում:

Ուկրաինայում պետական ավարտական ատեստավորում անցնելու ընթացքում դատապարտյալները ազատվում են աշխատանքից՝ օրենքով նախատեսված ժամկետով: Նրանց այս ընթացքում աշխատավարձ չի տրվում: Դատապարտյալների ընդհանուր կրթական և մասնագիտական ուսուցումը խրախուսվում և հաշվի է առնվում նրանց ուղղման աստիճանը որոշելիս: Ուսումնական պարապմունքների ժամանակացույցը կազմվում է կրթական ծրագրին համապատասխան՝ պահպանելով մանկավարժական կանոններն ու նորմերը, պատիժը կրելու կամ կալանքի տակ պահվող անձանց պահելու ռեժիմի պահանջները (այսուհետ՝ ռեժիմ), և հաստատվում է ուսումնական հաստատության ղեկավարի կողմից՝ համաձայնեցնելով գաղութի (նախնական կալանավայր) ղեկավարի հետ: Գաղութի (նախնական կալանավայրի) տնօրինությունը պայմաններ է ստեղծում ուսանողների ատեստավորման համար, այդ թվում՝ ժամկետից շուտ: Նախնական, հիմնական կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ստացած դատապարտյալներին տրվում է կրթության համապատասխան փաստաթուղթ՝ ԿԳՆ հրամանով հաստատված օրինակով: Իսկ օրինակ Լեհաստանում շրջանավարտների ստացած արդյունքները ստուգվում են Արտաքին քննության ընթացքում: Այն երկրներում, որտեղ ուսման ընթացքը լիովին համապատասխանում է դպրոցական ծրագրին, տրվում է բացարձակապես նմանատիպ դիպլոմ: Եթե դատապարտյալներն ավարտում են դասընթացի միայն մի մասը, ապա տրվում է հատուկ մշակված վկայական, որի հիման վրա անձը, ազատվելուց հետո, կարող է շարունակել ուսումը :

Ուկրաինայում, եթե ուսանողը ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում լքում է գաղութը (նախնական կալանավայրը), մասնավորապես՝ պատժի կրումից ազատվելու, մեկ այլ գաղութ (նախնական կալանավայր) տեղափոխվելու պատճառով, ապա նրան թույլատրվում է վաղաժամկետ ատեստավորում:

Այս դեպքում ուսումնական հաստատությունը նախապատրաստում է համապատասխան նյութերը (առաջադրանքները) և սահմանում ատեստավորման վերջնաժամկետ, բայց ոչ շուտ, քան ընթացիկ ուսումնական տարվա ավարտից երեք ամիս առաջ:

Ուկրաինայում գաղութի վարչակազմը (նախնական կալանավայր). միջնորդություն է ներկայացնում գաղութի (նախնական կալանավորման կենտրոն) վարչակազմին՝ ուսանողներին օրինակելի վարքի և ուսումնական հաջողությունների համար պարգևատրելու նպատակով.

Այս ամենի հետ մեկտեղ քիչ չեն այն դեպքերը, երբ դատապարտյալները հրաժարվում են կրթությունից: Հետազոտությունները ցույց են տվել, որ կալանավայրերում դպրոցից հրաժարվելը կապված է ինստիտուցիոնալ խոչընդոտների հետ (օրինակ՝ անբավարար գործնական միջոցառումներ, կրթական հնարավորությունների մասին տեղեկատվության բացակայություն), իրավիճակային (օրինակ՝ կրթությունը չի համարվում ներկա իրավիճակին օժանդակող) կամ ներառական (օրինակ՝ դժվարություններ կարդալու, գրելու կամ մաթեմատիկայի հետ կապված)[19]:

Ըստ հետազոտության՝ սկանդինավյան երկրներում բանտարկյալների յոթից տասնվեց տոկոսը չի ավարտել պարտադիր կրթությունը: Այս առումով ամենաբարձր ցուցանիշը հայտնաբերվել է Իսլանդիայում՝ 16%: Ֆինլանդիան և Նորվեգիան ունեցել են կրթության ամենացածր ցուցանիշները սկանդինավյան բանտերում (7,2% երկու երկրներում), մինչդեռ Դանիայում և Շվեդիայում ինը բանտարկյալներից մեկը չի ավարտել պարտադիր կրթությունը: ԱՄՆ-ում 70%-ը չի ավարտել միջնակարգ դպրոցը:

Միջազգային կոնվենցիաներում և օրենքներում ասվում է, որ բանտերում տրամադրվող կրթությունը պետք է համեմատվի սովորական կրթության հետ: Հետևաբար, բանտի ուսուցիչները ևս պետք է լիարժեք որակավորում ունենան և ստանան մասնագիտական և համակարգային աջակցություն և վերապատրաստում՝ ապահովելու համար, որ նրանց ուսուցումը համարժեք լինի անձանց կարիքներին: Բանտի իրավիճակը եզակի է և ունի սահմանափակումներ և խոչընդոտներ, որոնք չկան այլ միջավայրերում: Կրթությունը բանտերում պետք է իրականացվի բանտային իշխանությունների կողմից հաստատված սահմաններում՝ հաշվի առնելով բանտային համակարգի անվտանգության կանոնները և այլ նպատակներն ու պահանջները:

Այսպիսով, բանտային ուսուցիչ լինելը ներառում է լրացուցիչ և որոշ առումներով տարբեր առաջադրանքներ, որոնք պահանջում են հոգեբանական, սոցիալական և մանկավարժական պատրաստություն, ինչպես նաև մշտական աջակցություն՝ ուսուցիչների նախնական և

[19] https://link.springer.com/article/10.1007/s11159-020-09855-w

շարունակական վերապատրաստման միջոցով: Հետևաբար, թեև հաճախ նախընտրելի է, որ ուսուցումն իրականացվի վերապատրաստված ուսուցչական անձնակազմի կողմից, որն ունի հավաստագրված առարկայական իրավասություն, կարևոր է նաև, որ բանտում աշխատող ուսուցչական և ուսումնական անձնակազմը հասանելի լինի համապատասխան վերապատրաստումների համար, որոնք վերաբերում են իրենց առջև ծառացած կոնկրետ խնդիրներին: Եվրոպական երկրների մեծ մասում բանտերի ուսուցիչները պետք է ունենան համապատասխան դասավանդման/վերապատրաստման որակավորում: Թեև ուսուցիչների համար սա սովորաբար նույն որակավորումն է, որը պահանջվում է սովորական դպրոցներում աշխատող ուսուցիչներից, այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է մեծահասակների կրթության ուսուցանողներին և մանկավարժներին, տարբեր երկրներում մեծ տարբերություն կա: Միայն շատ փոքր թվով երկրներ են պահանջում, որ ուսուցիչները/վերապատրաստողները ունենան հատուկ որակավորում՝ կապված բանտերում դասավանդելու հետ: Շատ երկրներ առաջարկում են ներածական դասընթաց ուսուցիչների և վերապատրաստողների համար՝ բանտերում աշխատանքի հետ կապված, սակայն այդ դասընթացները տարբերվում են երկարությամբ և բովանդակությամբ: Օրինակ՝ Ռումինիայում ուսուցիչների վերապատրաստման համար մշակվել են մի շարք ձեռնարկներ[20], Ֆրանսիայում ուսուցիչներից պահանջվում է երեք շաբաթյա (առանձին) վերապատրաստում անցնել աշխատանքի առաջին տարվա ընթացքում[21], իսկ Լեհաստանում ուսուցիչները ենթարկվում են նույն կանոններին և համապատասխանում են նույն պահանջներին, ինչ դպրոցներից դուրս աշխատող մյուս ուսուցիչները: Հաշվի առնելով ՔԿՀ-ների բնույթը, որտեղ նրանք աշխատում են, ուսուցիչները սովորաբար աշխատում են կես դրույքով՝ որոշակի ժամանակահատվածների համար:

[20]https://www.dvv-international.org.ua/fileadmin/files/eastern-neighbors/Belarus/Publications/European-Adult-Education-outside-the-EU_Rus.pdf
[21] Effective Induction for Prison Teachers: Desk Research, France. Internet: http://prisonteachers.weebly.com/uploads/5/0/9/6/5096825/desk_research_-_france.pdf

եզրակացություն

Քրեական արդարադատության համակարգում դատապարտյալները խոցելի վիճակում են գտնվում պայմանավորված անազատության մեջ գտնվելու հանգամանքով: Վերջիններս իրենց իրավունքները չեն կարող իրացնել իրենց ցանկությամբ, քանի որ, անազատության մեջ գտնվելով, կանգնած են սահմանափակումների առջև:

Հանրակրթության ծրագրի իրականացման ընթացքում անտեսվել են անձանց մի շարք կարիքներ, որոնք հանգեցրել են վերջիններիս իրավունքների խախտմանը:
Քանի որ դատապարտյալների սոցիալական վերաադապտացիայի գործընթացում բացառիկ կարևոր գործոններից են կրթությունը և աշխատանքը, ուստի կարևոր է այս գործընթացում հաշվի առնել անձանց անհատական կարիքները: Կրթության բացակայությունը դժվարացնում է սոցիալական վերաադապտացիան և կարող է նաև մեծապես նպաստել կրկնահանցագործությանը: Ցուրաքանչյուր ՔԿՀ պետք է ապահովի, որ բոլոր դատապարտյաներին հասանելի լինեն կրթական ծրագրերը, որոնք հնարավորինս ընդգրկուն են և բավարարում են բանտարկյալների անհատական կարիքները, ներառյալ նրանց ճգտումները և ինչը չի խոչընդոտի նրանց այլ իրավունքների իրացմանը:
«Հետազոտության արդյունքներ» բաժնում ներկայացվել են այն խնդիրները, որոնք խոչընդոտ են հանդիսացել անձանց հասանելիությանը հանրակրթությանը: Իհարկե, ողջունելի է ՊՈԱԿ-ի կողմից ծրագրից դուրս մնացած անձանց հետ տարող աշխատանքը, սակայն պետք է փաստել, որ այն բավարար չէ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել վերացնելու առկա խոչընդոտները, որի պարագայում իրապես կրթությունը հասանելի կլինի բոլորին:

Այս համատեքստում հարկ է նշել, որ կրթությունը չի կարող արդյունավետ լինել, դատապարտյալների սոցիալական վերաադապտացիան կարող է շատ ավելի դժվար լինել՝ առանց դատապարտյալների կրթության պատրաստակամության: Հաշվի առնելով, որ դատապարտյալների որոշ մասը կրթությունը կիսատ է թողել պայմանական վաղաժամկետ ազատման դիմումների մերժումից հետո, ուստի կարևորվում է խրախուսման մեթոդների կիրառումը, որոնք կմոտիվացնեն դատապարտյալներին և այդպիսով կխթանեն նրանց ներգրավումը ծրագրում:

Մտահոգիչ է, որ անձինք չեն կարողացել իրենց ուսումը շարունակել կամ ուսում ստանալ աշխատանքի, այլ ՔԿՀ-ում գտնվելու, ներառական կրթության կարիքի և այլ խոչընդոտներիի պատճառով:

Առավել մտահոգիչ են այն խնդիրները, որոնք օրենսդրական կարգավորում ստացել են, սակայն գործնականում չեն կիրառվել: Ազատության սահմանափակման պայմաններում պետությունը պետք է առավելագույնս ներդնի այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան անձանց իրացնել իրենց իրավունքները:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ կարևոր ձեռքբերում է 19 և բարձր տարիքի անձանց համար հանրակրություն ստանալու հնարավորության ստեղծումը պատժի կրման ընթացքում՝ այն էլ պետության ֆինանսական միջոցների հաշվին:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը ավելի հումանիստական է, քանի որ ի տարբերություն շատ եվրոպական այլ երկրների, որտեղ հանրակրթության համար չափահասների տարիքային սահմանափակումներ կան, ՀՀ-ում օրենսդրական փոփոխության արդյունքում տարիքային սահմանափակում արդեն չկա:

Հաշվի առնելով վերոնկարագրյալ խնդիրները և ունեցած դրական փորձառությունը՝ կարևոր է շարունակել թե՛ օրենսդրական, թե՛ գործնական ոլորտներում փոփոխությունների իրականացումը, ինչը հնարավորություն կտա էլ ավելի արդյունավետ դարձնել հանրակրթությունը ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում:

Այս գործընթացում կարևոր գործոն է Կառավարություն-ՀԿ համագործակցությունը, քանի որ ՀԿ-ները վեր հանելով խնդիրները աջակցում են Կառավարությանը: Ցավոք սույն ուսումնասիրության ընթացքում Կառավարության կողմից բավարար աջակցություն չստացվեց:

Առաջարկություններ

Օրենսդրական

1.1 ԱՀԻԱ բաժիններին վերագրել ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ կրթությունը հավաստող փաստաթղթերի ձեռքբերման գործառույթը,

1.2 Դատապարտյալների կրթության արդյունավետ իրականացման նպատակով ստեղծել 19 և բարձր տարիքի անձանց համար կարիքի գնահատման նոր գործիք,

1.3 Մշակել և հաստատել դատապարտյալների ուսումնական խմբերի կազմավորման համար հատուկ չափորոշիչներ՝ հաշվի առնելով անձանց փաստացի կրթական մակարդակը և տարիքը,

1.4 Կատարել օրենսդրական փոփոխություններ և պայմանական վաղաժամկետ ազատման չափորոշիչներում խրախուսում ներառել հանրակրթական ծրագրում բարձր առաջադիմություն ունեցող և/կամ բարձր առաջադիմությամբ ավարտած անձանց մասով,

1.5 «Կրթության մասին» ՀՀ օրենքում և Քրեակատարողական օրենսգրքում կատարել փոփոխություններ և կրթական ծրագրերում ներգրավված, բայց պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց համար ապահովել կրթական ծրագրի շարունակականության և վկայականի հանձնման իրական երաշխիքներ,

1.6 Կրթության շարունակականության ապահովման նպատակով Քրեակատարողական օրենսգրքում կատարել լրացում և, անհրաժեշտության դեպքում:

1.7 Երեխա ունեցող կանանց կրթության ապահովման և երեխաների ժամանցի կազմակերպման նպատակով մշակել ենթաօրենսդրական ակտ՝ ՀՀ Քրեակատարողական օրենսգրքով նախատեսված մանկական տան ստեղծման կարգի և պայմանների վերաբերյալ,

1.8 ՀՀ քրեակատարողական օրենսգրքում կատարել փոփոխություն և հանրակրթական ծրագրերի համար ևս ներառել ուսուցման հեռավար ձևը,

1.9 Մշակել ենթաօրենսդրական ակտ և ստեղծել կարգավորումներ՝ հետպատժյա փուլում անձանց հետ աշխատանքի վերաբերյալ,

1.10 «Էքստեռն (դրսեկության) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը» հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1507-Ն հրամանում կատարել փոփոխություն և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալներին հնարավորություն տալ վկայական/ատեստատ ստանալ ավարտական քննությունների փուլում ևս,

1.11 «Էքստեռն (դրսեկության) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը» հաստատելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1507-Ն հրամանում կատարել փոփոխություն և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալներին հնարավորություն տալ քննություններին մասնակցել հեռավար տարբերակով,

1.12 ՔԿՀ-ներում կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և պետությանը աջակցելու նպատակով ՀՀ քրեակատարողական օրենսգրքում կատարել փոփոխություն և հնարավորություն ընձեռնել հասարակական կազմակերպություններին իրականացնել կրթական ծրագրերի մշտադիտարկումներ:

Գործնական

2.1 Խտրականության բացառման և տեղեկատվության հասանելիության նպատակով՝ մշակել դատապարտյալների շրջանում ծրագրի մասին իրազեկման մեխանիզմներ, մասնավորապես՝ ուղղման պլանում ներառել այդ մասին տեղեկատվություն:

2.2 Կրթության արդյունավետության նպատակով դատապարտյալների դասարանների խմբավորումները իրականացնել՝ ըստ փաստացի կրթական մակարդակի և տարիքի,

2.3 Շարունակել և ավարտին հասցնել դասասենյակների վերանորոգման և կահավորման աշխատանքները,

2.4 Դատապարտյալներին հնարավորություն տալ՝ անհրաժեշտ գրենական նյութերը՝ դասագրքեր, իրենց մոտ պահելու,

2.5 Անվտանգության նկատառումներից ելնելով՝ ՔԿՀ-ում որոշակի նյութերի արգելքով պայմանավորված, գործնական դասերը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով կիրառել այլ մեթոդներ, մասնավորապես՝ տեսանյութերի դիտում և այլն,

2.6 Դասացուցակները կազմել՝ հաշվի առնելով ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց կարիքները և ՔԿ հիմնարկի ներքին կանոնակարգի պահանջները,

2.7 Պարբերաբար իրականացնել վերապատրաստման դասընթացներ ՔԿՀ-ներում դասավանդող ուսուցիչների համար դատապարտյալների հետ աշխատանքի նրբություններին, դատապարտյալների իրավունքներին և պարտականություններին, ՔԿՀ ներքին կանոնակարգերին ծանոթացնելու ուղղությամբ,

2.8.Ապահովել ՔԿՀ-ներում ներառական կրթության ապահովման համար համապատասխան մեխանիզմները,

2.9 Հանրակրթական ծրագրի արդյունավետության, ինչպես նաև ծրագրի ընթացքում առաջացած խնդիրները, խոչընդոտները վեր հանելու նպատակով մշակել գնահատման մեթոդներ և պարբերաբար իրականացնել գնահատում:

Հավելվածներ

Հավելված 1

Հավելված 1.1

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

NEW GENERATION
HUMANITARIAN NGO

NG-04-452
2023-08-15
Հայաստան, ք. Երևան

ՀՀ Արդարադատության
նախարարություն
Նախարար Գրիգոր Մինասյանին

Հարգելի պարոն Մինասյան,

2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ծրագիրը Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» (#Juremonia #Ջուրեմոնիա) ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակում:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացնում է

- 2022 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն,

- մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն:

Տվյալ ուսումնասիրությունը նախատեսում է նաև մշտադիտարկման այցեր Արմավիրի, Նուբարաշենի, Արթիկի, Աբովյանի, Սևանի և Վանաձորի քրեակատարողական հիմնարկներ, որտեղ կրթական ծրագիրն իրականացվում է 81 դատապարտյալների շրջանում: Այցերը նախատեսված են 2023թ.-ի նոյեմբեր, 2024թ.-ի հունվար և մարտ ամիսներին, սակայն քննարկելի են, և կարող են համաձայնեցվել համապատասխան ՔԿՀ-ների հետ:

Ուսումնասիրության աշխատանքները իրականացվում են ՆՍՀԿ իրավական փորձագետ Շուշան Խնկոյանի և միջազգային փորձագետի կողմից:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ աշխատանքների արդյունավետությունը բխում է նաև կրթական ծրագրի իրականացման մշտադիտարկումների կազմակերպումից՝ սույնով խնդրում ենք աջակցել ուսումնասիրության արդյունավետ և անխափան իրականացմանը՝ ՆՍՀԿ փորձագետին տրամադրելով մուտքի թույլտվություն վերը նշված ՔԿՀ-ներ՝ հանրակրթական ծրագրի ընթացքը մշտադիտարկելու նպատակով:

Խնդրում ենք սույն գրությանը պատասխանել գրավոր՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

ՀԿ նախագահ **Սերգեյ Գաբրիելյան**

Հայաստան 0001 ք.Երևան,Թումանյան 10,բն.7
Apt 7,10 Tumanyan str.,Yerevan 0001 Armenia
+374 60 478989
+374 60 378989
NewGenerationNGO@gmail.com; infongngo@gmail.com
http://ngngo.net/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե 40/12-4136
«21» 08 2023թ.

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 60) 37-77-37, Հեռ.՝ (374 10) 44-34-80
Հեռ.՝ (374 60) 37-26-56, Հեռ.՝ (374 10) 44-29-04

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
Էլ. հասցե՝ NewgenerationNGO@gmail.com

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր 15.08.2023թ-ի գրությունը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող հանրակրթական ծրագրերի ուսումնասիրություն և վերլուծություն կատարելու համար քրեակատարողական հիմնարկներ մշտադիտարկման այցեր կատարելու թույլտվություն վերաբերյալ, վերահասցեագրվել և ուսումնասիրվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում:

Ուսումնասիրության արդյունքներով հայտնում եմ հետևյալը.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների շրջանում կրթական ծրագրերը կազմակերպում և իրականացնում է ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված կարգով տրամադրված համապատասխան լիցենզիաների հիման վրա:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 37.1 հոդվածի համաձայն՝

«1.Նախադպրոցական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառներում պետական վերահսկողությունն ապահովում է օրենքով ստեղծված համապատասխան տեսչական մարմինը կանխարգելիչ, վերահսկողական, հետադարձ կապի ապահովման և օրենքով սահմանված այլ գործառույթների միջոցով:

2. Կրթության ոլորտի տեսչական մարմինն իրականացնում է ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից նախադպրոցական, միջնակարգ,

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության, այդ թվում՝ կրթության պետական չափորոշիչների և կրթական ծրագրերի պահանջների պահպանման վերահսկողությունը, ինչպես նաև խորհրդատվական և կանխարգելիչ գործառույթների միջոցով նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպման, դրանց յուրացման ու կրթության որակի բարձրացման գործընթացներին»:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 24-րդ կետերի համաձայն.

« 1. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններն են՝

23) իրականացնում է ուսումնական հաստատությունների գործունեության գնահատում, հրապարակում է ուսումնական հաստատությունների վարկանիշային ցանկը.

24) մասնակցում է ուսումնական հաստատության արտաքին գնահատմանը»:

ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 701-Լ, N 703-Լ և N 705-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի 7-րդ ենթակետում և 11-րդ կետի 3-րդ ենթակետում ամրագրված է. « 10. Նախարարության խնդիրներն են՝ 7) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը,

11. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 3) պետական կրթական չափորոշիչների (այդ թվում՝ մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում) մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածում ամրագրված է.

«1.Հասարակական կազմակերպությունները կարող են օժանդակել պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեությանը, այդ թվում՝ դատապարտյալների վերասոցիալականացմանը և նրանց իրավահպատակ վարքագծի ձևավորմանը:

2. Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության արդարադատության և պաշտպանության նախարարների հաստատած՝ <u>մրցութային կարգով ընտրված հասարակական դիտորդների խմբի միջոցով</u>:

3. Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը (...)»:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Օրենսդիրը ՀՀ քրեակատարողական օրենսգրքում արտահայտելով իր կամահայտնությունը՝ հստակ ամրագրել է, որ հանրային իշխանությունը հասարակական կազմակերպություններից ակնկալում է օժանդակություն՝ պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեությանը և ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացում՝ մրցութային կարգով ընտրված հասարակական դիտորդների խմբի միջոցով: Տվյալ պարագայում հանրակրթական ծրագրերի իրականացման նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու գործառույթը պատկանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, և հասարակական կազմակերպությունները չեն կարող այնպիսի գործառույթներ իրականացնել, որոնք օրենսդրության համաձայն վերապահված են հանրային իշխանության մարմիններին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում եմ, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կողմից Ձեր կազմակերպության ներկայացուցիչներին չի կարող տրամադրվել մուտքի թույլտվություն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկման այցեր կատարելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԾՈՎԻՆԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

NG 04-452
20.11.2023թ.
Հայաստան, Երևան

ՀՀ Արդարադատության նախարար
Գրիգոր Մինասյանին

Հարգելի պարոն Մինասյան,

2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ), ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի քրեակատարողական հիմարկներում պատիժը կրող անձանց կրթության իրավունքի իրացմանը՝ համաձայն 2022 թվականի մայիսի 25-ին փոփոխված «Կրթության մասին» ՀՀ օրենքում կատարված բարեփոխման, մասնավորապես՝ աջակցել քրեակատարողական հիմարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի իրականացմանը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացնում է

- 2022 թվականի օգոստոսի 1-ից «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն,

- մասնավորապես՝ քրեակատարողական հիմարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն:

Տվյալ ուսումնասիրությունը նախատեսում է նաև այցեր՝ Արմավիրի, Նուբարաշենի, Արթիկի, Աբովյանի, Սևանի և Վանաձորի քրեակատարողական հիմարկներ՝ հանրակրթական ծրագրում ընդգրկված և ուսումը դադարեցրած ազատազրկված անձանց հետ հարցազրույցներ իրականացնելու նպատակով: Այցերը նախատեսված են վերոնշյալ քրեակատարողական հիմարկներից յուրաքանչյուրում 2 անգամ (ընդամենը 12 այց)՝ 2023թ.-ի դեկտեմբեր, 2024թ.-ի հունվար և մարտ ամիսներին, սակայն ժամկետները քննարկելի են և կարող են համաձայնեցվել համապատասխան ՔԿՀ-ների հետ:

ՆՍՀԿ-ն վերոնշյալ ուսումնասիրությամբ ցանկանում է աջակցել պետությանը՝ հայտնաբերել օրենսդրական փոփոխություններից հետո առաջացած խնդիրները և խոչընդոտները, դրանք ներկայացնել շահագրգիռ կողմերին՝ հայտնաբերված խնդիրների և բացերի լուծմանն ուղղված համագործակցության առաջարկով:

Ուսումնասիրությունն իրականացվում է ՆՍՀԿ իրավական փորձագետ Շուշան Խնկոյանի և միջազգային փորձագետի կողմից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սույնով խնդրում ենք աջակցել ուսումնասիրության արդյունավետ և անխափան իրականացմանը՝ ՆՍՀԿ փորձագետին տրամադրելով մուտքի թույլտվություն վերոնշյալ ՔԿՀ-ներ:

Խնդրում ենք սույն գրությանը պատասխանել գրավոր՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով

ՆՍՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե 40/12-6323
«29» 11 20 23 թ.

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 60) 37-77-37, Հեռ.՝ (374 10) 44-34-80
Հեռ.՝ (374 60) 37-26-56, Հեռ.՝ (374 10) 44-29-04

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Էլ. հասցե՝ contact@ngngo.net

Հարգելի պարոն Գաբրիելյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր20.11.2023թ-ի թիվ NG-04-452 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ) քրեակատարողական հիմնարկներում իրականացվող հանրակրթական ծրագրերի ուսումնասիրություն և վերլուծություն կատարելու համար մուտքի թույլտվություն տրամադրելու վերաբերյալ, վերահասցեագրվել և ուսումնասիրվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում:

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար հանրակրթական ծրագրերնիրականացվում են ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված համապատասխան լիցենզիաների հիման վրա, իսկ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներն իրականացնում են կազմակերպչական աշխատաքները:

Ուստի, հաշվի առնելով, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հանրակրթական ծրագրերի իրականացնողը և պատասխանատուն հանդիսանում է ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ Ձեր կողմից ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված վերոնշյալ գրությունը ուղարկվել է ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ, և ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածում ամրագրված է, որ.

1.Հասարակական կազմակերպությունները կարող են օժանդակել պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեությանը, այդ թվում՝ դատապարտյալների վերասոցիալականացմանը և նրանց իրավահպատակ վարքագծի ձևավորմանը:

2. Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության արդարադատության և պաշտպանության նախարարների հաստատած՝ մրցութային կարգով ընտրված հասարակական դիտորդների խմբի միջոցով:

3. Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունների շրջանակը համապատասխանաբար սահմանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության և պաշտպանության նախարարները:

Բացի այդ, ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի11-ի N 701-Լ, N 703-Լ և N 705-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի 7-րդ ենթակետում և 11-րդ կետի 3-րդ ենթակետում ամրագրված է, որ.

10. Նախարարության խնդիրներն են՝ 7) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը,

11. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 3) պետական կրթական չափորոշիչների (այդ թվում՝ մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում) մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 729-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ», «ե» և «ը» պարբերություններում ամրագրված է, որ.

1) տնտեսավարող սուբյեկտների կողմից նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստուգումների իրականացումը հետևյալ ուղղություններով՝

ա) կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպում, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարում, տարեկան ուսումնական ժամանակացույցների, դասացուցակների համապատասխանություն.

բ) սովորողների և շրջանավարտների (անկախ կրթության ձևից) գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման քննակարգերի, աշխատակարգերի, պահպանում...

ե) պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ անհրաժեշտ ուսումնագիտական, մեթոդական տեղեկատվությամբ, ծրագրերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, այլ անհրաժեշտ փաստաթղթերով ապահովվածություն...

ը) կրթության որակի պահպանման նկատմամբ հաստատությունների կանոնադրական պահանջների կատարման, հաստատությունների կառավարման մարմինների լիազորությունների իրականացման ու պահպանման:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտնվել է, որ «Նոր սերունդ» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված առաջարկն այն մասին, որ ուսումնասիրություն և վերլուծություն իրականացնի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների հարնակրթական ծրագրերի նկատմամբ՝ չի կարող բավարարվել, քանի որ քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողության գործառույթը վերապահված է մրցութային կարգով ընտրված հասարակական դիտորդների խմբին, հանրակրթական ծրագրերի իրականացման նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու գործառույթը պատկանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, և հասարակական կազմակերպությունները չեն կարող այնպիսի գործառույթներ իրականացնել, որոնք օրենսդրության համաձայն վերապահված են հանրային իշխանության մարմիններին, այդ կազմակերպություններն օրենսդրությանը համապատասխան կարող են հանրային իշխանության մարմիններին օժանդակել և հասարակական վերահսկողություն իրականացնել՝ բացառապես օրենսդրության շրջանակում:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավակարգավորումների հիմնավորմամբ ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը՝ հայտնում եմ, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից Ձեր կազմակերպության ներկայացուցիչին չի կարող տրամադրվել մուտքի թույլտվություն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող հանրակրթական ծրագրերի ուսումնասիրություն և վերլուծություն կատարելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Յողիկ Ալեքսանյան
ՀՀ ԱՆ ՔԿԾ սոցիալական, հոգեբանական
և իրավական աշխատանքների բաժին
Հեռ. 060 37-37-90

NG-04-514
24.10.2023թ.
Հայաստան, Երևան

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին

Հարգելի տիկին Անդրեասյան,

2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ), ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն իրականացնում է 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հաշվի առնելով, որ Հանրակրթական ծրագրերի վերաբերյալ ուսումնասիրությունների և մշտադիտարկումների իրականացման գործառույթը վերապահված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, և ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, սույնով

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Հանձնարարել տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին՝

- *2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի փոփոխությունը գործնականում կիրառելի է թե ոչ, ինչպիսի՞ խնդիրներ են առաջացել գործնականում այն կիրառելու ընթացքում,*
- *Հանրակրթական ծրագրում ի՞նչ չափորոշիչներով են ընտրվել ծրագրի մասնակիցները,*
- *Ի՞նչ խնդիրների պատճառով հնարավոր չի եղել ծրագրում ներգրավվել հանրակրթության կարիք ունեցող բոլոր մասնակիցներին,*
- *Արդյոք ծրագրի ընթացքում եղել են ուսումը դադարեցրած մասնակիցներ, եթե այո ապա քանիսն են եղել և ինչ պատճառներով են դադարեցրել,*
- *Տվյալ պահին քանի հոգի է փաստացի ընդգրկված ուսումնական ծրագրում ըստ ՔԿՀ-ների և թեմաների,*
- *Կա՞ն արդյոք հանրակրթական ծրագրի ընթացիկ արդյունքներ, եթե այո խնդրում ենք ներկայացնել,*
- *Ինչպե՞ս է իրականացվել ուսուցիչների ընտրության կարգը,*
- *Ինչպե՞ս է իրականացվել անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերումը,*
- *Ի՞նչ խոչընդոտներ են առաջացել ծրագրի իրականացման ընթացքում,*
- *2023թ-ին որ քրեակատարողական հիմնարկներում է իրականացվում հանրակրթական ծրագիրը:*
- *2023թ.-ին ընդգրկվե՞լ են արդյոք այլ քրեակատարողական հիմնարկներ՝ 2022թ.-ի համեմատ, եթե այո ապա ինչ հիմքով են ընդգրկվել այդ հիմնարկները:*

Խնդրում ենք վերոնշյալ տեղեկատվությունը տրամադրել 2022թ-ի և 2023թ-ի տվյալներով առանձին-առանձին:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով

ՆՍՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N 02/09.1/32548-2023

ՀՀ քաղաքացի Շուշան Խնկոյանին

(էլեկտրոնային հասցե՝ shkhnkoyan.ngngo@gmail.com)

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի
նոյեմբերի 14-ի գրության

Հարգելի՛ տիկին Խնկոյան

Հաշվի առնելով, որ հանրակրթության ոլորտի իրավակարգավորումները վերաբերում են 19 տարին չլրացած անձանց՝ հայտնում եմ, որ Ձեր գրությամբ բարձրացված հարցադրումները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

Կատարող՝ Արմինե Բարսեղյան
Հանրակրթության վարչության
հանրակրթական և արտադպրոցական կրթության
քաղաքականության մշակման և վերլուծության
բաժին. հեռ՝ +374 10 599 619

NG-04-573
28.12.2023թ.
Հայաստան, Երևան

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարար Ժաննա Անդրեասյանին

Հարգելի տիկին Անդրեասյան,

2023թ-ի հոկտեմբերի 24-ին Ձեզ ուղղված NG-04-514 գրությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) հայտնել էր, որ 2023թ-ի հուլիսի 1-ից ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթադրամաշնորհային ծրագիրը (Ծրագիր)։ Ծրագրի շրջանակներում ՆՍՀԿ-ն իրականացնում է 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն։

Վերոնշյալ գրությամբ ՆՍՀԿ-ն խնդրել էր տրամադրել տեղեկատվություն նշյալ ուսումնասիրության իրականացման նպատակով։

2023թ-ի նոյեմբերի 20-ին ստացել ենք Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսյա Սվաջյանի պատասխան գրությունը։ Գրությամբ հայտնել են, որ հանրակրթության ոլորտի իրավակարգավորումները վերաբերում են 19 տարին չլրացած անձանց, ուստի անհրաժեշտ է դիմել ՀՀ արդարադատության նախարարություն։

Այնուամենայնիվ, ցանկանում ենք ևս մեկ անգամ նշել, որ վերոնշյալ ուսումնասիրությունը վերաբերում է 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող հանրակրթական ծրագրին։

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ համաձայն ՀՀ Արդարադատության նախարարության կողմից ՆՍՀԿ-ի տրամադրած տեղեկատվության հանրակրթական ծրագրերի նկատմամբ մոնիտորինգ իրականացնելու գործառույթը պատկանում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը։

Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքները՝ սույնով

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Հանձնարարել պատասխանել ՆՍՀԿ-ի 2023թ-ի հոկտեմբերի 24-ի NG-04-514 գրությանը և ներքոնշյալ հարցերին, այն է.

- 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի փոփոխությունը գործնականում կիրառելի է թե ոչ, ինչպիսի՞ խնդիրներ են առաջացել գործնականում այն կիրառելու ընթացքում,
- Հանրակրթական ծրագրում ի՞նչ չափորոշիչներով են ընտրվել ծրագրի մասնակիցները,
- Ի՞նչ խնդիրների պատճառով հնարավոր չի եղել ծրագրում ներգրավվել հանրակրթության կարիք ունեցող բոլոր մասնակիցներին,
- Արդյոք ծրագրի ընթացքում եղել են ուսումը դադարեցրած մասնակիցներ, եթե այո ապա քանիսն են եղել և ինչ պատճառներով են դադարեցրել,
- Տվյալ պահին քանի հոգի է փաստացի ընդգրկված ուսումնական ծրագրում ըստ ՔԿՀների և թեմաների,
- Կա՞ն արդյոք հանրակրթական ծրագրի ընթացիկ արդյունքներ, եթե այո խնդրում ենք ներկայացնել, - Ինչպե՞ս է իրականացվել ուսուցիչների ընտրության կարգը,
- Ինչպե՞ս է իրականացվել անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերումը,
- Ի՞նչ խոչընդոտներ են առաջացել ծրագրի իրականացման ընթացքում,
- 2023թ-ին ո՞ր քրեակատարողական հիմնարկներում է իրականացվում հանրակրթական ծրագիրը:
- 2023թ.-ին ընդգրկվե"լ են արդյոք այլ քրեակատարողական հիմնարկներ՝ 2022թ.-ի համեմատ, եթե այո ապա ինչ հիմքով են ընդգրկվել այդ հիմնարկները:
- Արդյո՞ք ՔԿՀ-ներում հանրակրթական ծրագիրը ավարտած անձանց տրամադրվում է նույն նմուշի դիպլոմը, որը տրամադրվում է հանրակրթական դպրոցներում: Եթե ոչ, ապա ինչ նմուշի դիպլոմ է տրամադրվում ՔԿՀ-ներում և այն ի՞նչ իրավական ուժ ունի:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով

ՆՍՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N 02/09.1/507-2024

ՀՀ քաղաքացի
ՇՈՒՇԱՆ ԽՆԿՈՅԱՆԻՆ
Էլ. հասցե՝ shkhnkoyan.ngngo@gmail.com

Ի պատասխան Ձեր՝ 28.12.2023թ.
թիվ 1004613, 04-573 գրության

Հարգելի՛ տիկին Խնկոյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հանրակրթության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենքի) 18-րդ հոդվածը սահմանում է հանրակրթության նպատակը և նրա հիմնական խնդիրները, իսկ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է սովորողների պարտադիր կրթություն ստանալու տարիքային շեմը և համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն հրամանով հաստատված հավելվածի 1-ին կետի՝ սովորողների ընդունելությունը դպրոց իրականացվում է տնօրենի հրամանով՝ երեխայի (սովորողի) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի և հաստատության միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Հարկ է նշել, որ հանրակրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները սահմանված են «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածով և հիմք ընդունելով նույն հոդվածի 19-րդ մասը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 1507-Ն հրամանում ներկայումս կատարվում է լրամշակում՝ համաձայն որի ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալի համար համապատասխան քրեակատարողական հիմնարկներում՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից կազմակերպվելու են էքստեռն ավարտական քննություններ, որը քննությունները հաջողությամբ հանձնած դատապարտյալներին հնարավորություն կտա ստանալու պետական նմուշի ատեստատ:

Հավելեմ նաև, որ գրությամբ բարձրացված մյուս հարցերը դուրս են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավասություններից:

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

Կատարող՝ Արմինե Բարսեղյան
Հանրակրթության վարչության
հանրակրթական և արտադպրոցական կրթության
բաղադրամասության մշակման և վերլուծության
բաժին. հեռ՝ +374 10 599 619

NG-04-559
14.11.2023թ.
Հայաստան, Երևան

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Զոնիկ Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան,

2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ), ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթաղրամաշնորհային ծրագիրը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կատարում է 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն, մասնավորապես՝ քրեակատարողական հիմարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հաշվի առնելով, որ Հանրակրթական ծրագիրը իրականացվում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, և ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, սույնով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Հանձնարարել տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

- *2023թ-ի հոկտեմբեր ամսվա դրությամբ հանրակրթական ծրագրի մասնակիցների քանակը՝ ըստ ՔԿՀ-ների:*
- *2023թ-ի հոկտեմբեր ամսվա դրությամբ՝ հանրակրթական ծրագիրը դադարեցրած մասնակիցների քանակը՝ ըստ ՔԿՀ-ների:*

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով

ՆՍՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյան

NG-04-574
28.12.2023թ.
Հայաստան, Երևան

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Զոնիկ Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան,

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) Ձեզ ուղղված 2023թ-ի նոյեմբերի 14-ի առ NG-04-559 գրությամբ խնդրել էր տրամադրել տեղեկատվություն ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող հանրակրթական ծրագրերի վերաբերյալ:

Նշված գրությունը ուղարկվել է ՊՈԱԿ-ին պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով՝ info@lawinstitute.am:

Մինչև օրս ՆՍՀԿ-ն չի ստացել գրության պատասխանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույնով

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

- Պատասխանել ՆՍՀԿ-ի 2023թ.-ի նոյեմբերի 14-ի NG-04-559 գրությանը՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով

ՆՍՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյան

«ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
հեռ. 57-44-06, 57-44-53
էլ. փոստ: info@lawinstitute.am
N Ե-015
«12» «հունվար» 2024թ.

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան Ձեր 14.11.2023 թվականի NG-04-559 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում 2023 թվականին հոկտեմբեր ամսվա դրությամբ «Արմավիր» ՔԿՀ-ում եղել է 46 սովորող, «Արթիկ» ՔԿՀ-ում՝ 25, «Սևան» ՔԿՀ-ում՝ 16, «Վանաձոր» ՔԿՀ-ում՝ 11, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում՝ 8, «Աբովյան» ՔԿՀ-ում՝ 4:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Մինչև 19 տարեկան ազատազրկման ձևով պատիժ կրող և կալանավորված անձանց հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրին» մասնակցում է «Արմավիր» ՔԿՀ-ում՝ 3 և «Աբովյան» ՔԿՀ-ում 5 սովորող:

2023 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ Ծրագրի սովորող չի համարվել «Սևան» ՔԿՀ-ում 1 սովորող:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԶՈՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Կատարող՝ Իվետա Մեջլումյան
վերականգնողական ծրագրերի
և հանրակրթության բաժին
Հեռ. (010) 57-44-83

NG-04-580
17.01.2024թ.
Հայաստան, Երևան

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Զոնիկ Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան,

2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ), ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կատարում է 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հաշվի առնելով, որ Հանրակրթական ծրագիրը իրականացվում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՊՈԱԿ) կողմից, խնդրում ենք թույլ տալ ՆՍՀԿ փորձագետին իրականացնել հարցազրույց Ձեր կամ ՊՈԱԿ-ի այլ ներկայացուցչի հետ:

Հարցազրույցի անցկացման հարմար օրը և ժամը կարող եք Դուք առաջարկել: Խնդրում ենք հնարավորության դեպքում հարցազրույցի անցկացման օր ընտրել մինչև 2024թ.-ի փետրվարի 15-ը:

Հարգանքով

ՆՍՀԿ նախագահ՝ Սերգեյ Գաբրիելյան

«ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
հեռ. 57-44-06, 57-44-53
էլ. փոստ: info@lawinstitute.am
N Ե - 099
«07» «փետրվար» 2023թ.

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գաբրիելյան,

Համաձայն Ձեր 17.01.2024 թվականի թիվ NG-04-580 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրության և վերլուծության նպատակով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից փորձագետի հետ հարցազրույցը կվարի վերականգնողական ծրագրերի և հանրակրթության բաժնի պետ Հ. Հովակիմյանը 12.02.2024թվականին՝ ժամը 14.30-ին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԶՈՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Անա Պողոսյան
վերականգնողական ծրագրերի և հանրակրթության բաժին Հեռ. (010) 57-44-53

Հավելված 1.6

NG-04-581
24.01.2024թ.
Հայաստան, Երևան

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդական խմբին

Հարգելի գործընկերներ,

2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ), ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ՆՍՀԿ-ն կատարում է 2022 թվականի օգոստոսի 1-ից «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի (Ծրագիր) ուսումնասիրություն և վերլուծություն:

Տվյալ ուսումնասիրությունը նախատեսում է նաև անանուն հարցազրույցների իրականացում «Արմավիր», «Նուբարաշեն», «Արթիկ», «Աբովյան», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում 2022թ-ին Ծրագրում ընդգրկված և Ծրագրից դուրս մնացած 19 և բարձր տարիքի դատապարտյալների շրջանում:

Հարցազրույցները իրականացվելու են նախապես մշակված հարցաշարերի և ընտրանքի հիման վրա:

Վերոնշյալ ուսումնասիրության շրջանակներում ՆՍՀԿ-ն ակնկալում է Խմբի աջակցությունը 20 դատապարտյալների հետ հարցազրույցների իրականացման մասով և նախատեսում է յուրաքանչյուր հարցազրույցի համար 6240 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

Ելնելով վերոգրյալից, սույնով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

- *Ցուցաբերել աջակցություն դատապարտյալների հետ հարցազրույցների իրականացման մասով:*

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով

Ծրագրի համակարգող **Ալինա Միրզոյան**

Հավելված 1.7

NG-04-584
09.02.2024թ.
Հայաստան, Երևան

ՀՀ Արդարադատության նախարար
Գրիգոր ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն ՄԻՆԱՍՅԱՆ,

Ինչպես տեղյակ եք, 2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ), ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կատարում է 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասը լրացվել է՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից 2019 թվականի նոյեմբերի 28-ին N 1717-Լ որոշմամբ հաստատված ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ ռազմավարության: Ռազմավարությամբ նաև նշված է, որ համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու համար իրականացվելու է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա կմշակվի օրենսդրական փոփոխության նախագիծ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույնով

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

- *Հանձնարարել տրամադրել իրականացված միջազգային փորձի ուսումնասիրությունը:*

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ **Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ info@moj.am

№ /12.1/6204-2024

«16» փետրվարի 2024 թ.

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՋՈՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք.Երևան, Մովսես Խորենացու փող., 162ա շենք
Էլ.փոստ՝ info@lawinstitute.am)

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

Ձեզ եմ ուղարկում 2024 թվականի փետրվարի 13-ին ՀՀ արդարադատության նախարարություն հասցեագրված «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանի թիվ Մ/11460-2024 գրությունը:

Խնդրում եմ տրամադրել դիմումատուին գրությամբ հայցվող կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

Восстановимая подпись

X

Sirvard Gevorgyan

Подписано: GEVORGYAN SIRVARD 6804830105

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված 1.8

NG-04-462
15.04.2024թ.
Հայաստան, Երևան

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Զոնիկ Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան,

2023թ.-ի հուլիսի 1-ից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ), ԵՄ ֆինանսական աջակցությամբ ընթացող «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի շրջանակում (www.juremonia.am) իրականացնում է «Դատապարտյալների կրթության իրավունքը» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կատարում է 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի լրացման իրականացման մասին ուսումնասիրություն, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող 19 և բարձր տարիքի դատապարտյալների համար իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» հանրակրթական ծրագրի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հաշվի առնելով, որ Հանրակրթական ծրագիրը իրականացվում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, և ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, սույնով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Հանձնարարել 19 և բարձր տարիքի անձանց շրջանում իրականացվող հանրակրթական ծրագրի վերաբերյալ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

- *2022-2023թթ. և 2023-2024թթ. ուսումնական տարիների մեկնարկի պահին ընդգրկված դատապարտյալների թիվը՝ ըստ ՔԿՀ-ների և ուսումնական տարիների,*
- *2022-2023թթ. և 2023-2024թթ. ուսումնական տարիների ընթացքում ծրագրից դուրս մնացած կամ դուրս եկած դատապարտյալների թիվը՝ ըստ ՔԿՀ-ների և ուսումնական տարիների,*
- *2022թ. և 2023թ. հանրակրթության ծրագրում ընդգրկված և պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների թիվը,*
- *2022թ. ծրագրում ընդգրկված դատապարտյալներից քանի՞սն է մասնակցել էքստեռն ավարտական քննություններին,*
- *2022թ-ին ծրագրում ընդգրկված դատապարտյալներից քանի՞սն է էքստեռն քննություններից ստացել բավարար, իսկ քանի՞սը անվաբարար գնահատականներ,*
- *Արդյո՞ք հանրակրթական ծրագրում ապահովվում է ներառականությունը, եթե այո, ապա ինչպե՞ս,*
- *Հանրակրթության ծրագրում սովորող հիմնական կրթությունը հաջողությամբ ավարտած դատապարտյալները ի՞նչ կարգով են վկայական ստանում,*
- *Քանի՞ ուսուցչի հաստիք է նախատեսված և քանի՞ թափուր հաստիք է առկա՝ 2024թ-ի ապրիլի 1-ի դրությամբ:*

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ **Սերգեյ Գաբրիելյան**

Հավելված 1.9

NG-04-467
08.05.2024թ.
Հայաստան, Երևան

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Սյուզաննա Մակյանին

Հարգելի տիկին Մակյան,

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) 2024թ-ի փետրվարի 9-ին գրություն էր ուղարկել ՀՀ արդարադատության նախարարությանը և խնդրել տրամադրել 2022թ-ի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի փոփոխության վերաբերյալ իրականացված միջազգային փորձի ուսումնասիրությունը: ՆՍՀԿ-ի վերոնշյալ գրությունը 2024թ-ի փետրվարի 15-ին վերահասցեավորվել է Ձեզ:

2024թ-ի ապրիլի 16-ին նույնպես ուղարկվել է գրություն՝ NG-04-642, որով խնդրել ենք տրամադրել որոշակի տեղեկատվությունը 19 և բարձր տարիքի դատապարտյալների հանրակրթության մասով:

ՆՍՀԿ-ն մինչ օրս պատասխան չի ստացել երկու գրությունների վերաբերյալ:

Ելնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի, սույնով

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

- *Հանձնարարել տրամադրել տեղեկատվություն գրությունների ընթացքի վերաբերյալ:*

Կանխավ շնորհակալություն:

Կից ներկայացվում են.

- 2024թ-ի փետրվարի 12-ի NG-04-584 գրությանը պատճենը,
- ՀՀ արդարադատության նախարարության կողմից վերահասցեավորման պատճենը,
- 2024թ-ի ապրիլի 16-ի NG-04-642 գրության պատճենը:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ **Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

«ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան, Մ. Խորենացու 162ա
Հեռ. 57-44-83
Էլ. փոստ: info@lawinstitute.am
N Ե -266
27.05.2024թ.

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գաբրիելյան,

Ի պատասխան՝ Ձեր 2024 թվականի մայիսի 8-ի NG-04-467 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն, 2022 թվականից իրականացնում է քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող (19 և ավելի տարեկան) դատապարտյալների համար նախատեսված հանրակրթական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

1. 2022-2023 ուսումնական տարում՝ Ծրագրի մեկնարկի պահին ներգրավված են եղել 91 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ – 19	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ – 15
ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ – 21	ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ - 12
ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ – 3	ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ - 21

2023-2024 ուսումնական տարում՝ Ծրագրի մեկնարկի պահին ներգրավված են եղել 60 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ – 24	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ – 7
ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ – 10	ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ - 6
ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ – 3	ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ - 10

2. 2022-2023 ուսումնական տարում Ծրագրից դուրս են մնացել 32 դատապարտյալ, որոնցից 10-ը սեփական դիմումի համաձայն հրաժարվել են Ծրագրի հետագա մասնակցությունից, իսկ 22-ը հեռացվել են Ծրագրից անհարգելի բացակայությունների պատճառով:

2023-2024 ուսումնական տարում Ծրագրից դուրս են մնացել 25 դատապարտյալ, որոնցից 13-ը սեփական դիմումի համաձայն հրաժարվել են Ծրագրի հետագա մասնակցությունից, 12-ը Ծրագրից անհարգելի բացակայությունների պատճառով հեռացվել են:

3. 2022-2023 ուսումնական տարում Ծրագրի մասնակից 11 դատապարտյալ պայմանական վաղաժամկետ ազատվել է:

2023-2024 ուսումնական տարում՝ Ծրագրի մասնակից 3 դատապարտյալ պայմանական վաղաժամկետ ազատվել է:

4. 2022-2023 ուսումնական տարում Ծրագրում ընդգրկված դատապարտյալներից էքստեռն քննությանը 38 դիմումատուներից մասնակցել է 33-ը, 3-ը հրաժարվել է մասնակցությունից, 1-ը չի մասնակցել հիմնական կրթության վկայականի բնօրինակը չլինելու պատճառով, 1-ը պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու պատճառով:

5. 33 դատապարտյալներից 27-ը ստացել է բավարար գնահատական, 6-ը անբավարար՝ մեկ կամ երկու առարկաներից:

6. 2022 և 2023 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվել է Ծրագրի սովորողների գնահատում, որի արդյունքներից պարզ է դարձել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ չկան:

7. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1507-Ն հրամանով հաստատված դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի համաձայն՝ էքստեռն ավարտական և պետական քննությունները բարեհաջող հաղթահարած Ծրագրի սովորողները ստանում են հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ:

8. 2024 թվականի ապրիլի 1-ի դրությամբ առկա է ուսուցչի 15 դրույք, որը բաշխված է 44 ուսուցչի միջև (ըստ ժամային ծանրաբեռնվածության):

Կից ներկայացվում է նաև Ծրագրի ներդրման համար միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Առդիր՝ 1 էլեկտրոնային նյութ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՅՈՒԶԱՆՆԱ ՄԱԿՅԱՆ

Կատարող՝ Աննա Պողոսյան
Վերականգնողական ծրագրերի
և հանրակրթության բաժին
Հեռ. (010) 57-44-06

Քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող (19 և ավելի տարեկան) դատապարտյալների համար նախատեսված հանրակրթական ծրագրի ներդրման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրություն

Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ ազատությունից զրկման ցանկացած վայրում պետք է ապահովվեն ազատությունից զրկված բոլոր անձանց հասանելիությունը կրթական ծրագրերին՝ հնարավորինս ապահովելով դրանց բազմակողմանիությունը և հաշվի առնելով անձի անհատական պահանջմունքներն ու ցանկությունները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ազատությունից զրկված անչափահասների կրթությանը[ii]:

«Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի կոնվենցիայի (Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 5-ից:) 1-ին հոդվածում ամրագրված է. «1. Սույն Կոնվենցիայի նպատակի համար «խտրականություն» հասկացությունը ներառում է ցանկացած տարբերակում, բացառություն, սահմանափակում կամ նախապատվություն՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքի, ազգային կամ սոցիալական պատկանելության, տնտեսական դրության կամ ծննդի հիմքով, ինչի նպատակը կամ հետևանքն է կրթության բնագավառում հավասար վերաբերմունքի վերացումը կամ խախտումը, մասնավորապես.

ա) որևէ անձի կամ անձանց խմբի՝ ցանկացած տեսակի կամ մակարդակով կրթություն ստանալու հնարավորությունից զրկելը,

բ) որևէ անձի կամ անձանց խմբի կրթությունը ցածր ստանդարտով սահմանափակելը

,

գ) որևէ անձի կամ անձանց խմբի համար կրթական առանձին համակարգեր կամ ուսումնական հաստատություններ ստեղծելը կամ պահպանելը, բացի այն դեպքերից, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներով,

դ) որևէ անձի կամ անձանց խմբի մարդկային արժանապատվությանն անհարիր պայմաններ պարտադրելը:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «կրթություն» հասկացությունը վերաբերում է կրթության բոլոր տեսակներին ու մակարդակներին և ներառում է կրթություն ստանալու հնարավորությունը, կրթության ստանդարտն ու որակը, ինչպես նաև կրթություն տալու պայմանները:»:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված անձի պարտադիր հանրակրթություն ստանալու մինչև 19-ը տարին լրացած լինելու տարիքային ցենզն առաջին հերթին հակասում է ՀՀ Սահմանադրությանն ու «Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի կոնվենցիային: Միևնույն ժամանակ, պետությունը 2015 թվականից առ այսօր ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անչափահասների ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և մի շարք այլ օրենքներով նախատեսված անձի կրթության իրավունքն ապահովելու իր պոզիտիվ պարտականությունը չի իրականացրել:

Ուստի, «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասով ամրագրված անձի պարտադիր հանրակրթություն ստանալու մինչև 19-ը տարին լրացած լինելու տարիքային ցենզ սահմանելը հակասում է ՀՀ Սահմանադրությանն ու «Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի կոնվենցիային, իսկ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ Սովետական Միությունում 20-րդ դարի սկզբին համընդհանուր անգրագիտության վերացման կապակցությամբ տեղի ունեցան հայտնի իրադարձություններ: Մասնավորապես՝ փորձելով օգնել ոչ գրագետ մեծահասակներին՝ 1919 թվականի դեկտեմբերի 26-ին բոլշևիկներն ընդունեցին «Անգրագիտությունը վերացնելու մասին» որոշում, որն ընդհանուր առմամբ հայտնի էր Լիկբեզ (ликвидации безграмотности բառի հապավում) անվամբ, որով սկսվեց հավակնոտ արշավ 1923-1927թթ.-ներին: Պատմական հենց այս իրադարձությունը (Լիկբեզը) հիմք հանդիսացավ ուղղիչ աշխատանքային հիմնարկներում (գաղութներում) կրթական գործունեության նոր փուլի: Արդյունքում 1920 թվականին

ստորագրվեց «Կալանքի ընդհանուր վայրերի մասին կանոնակարգը», որով պարտադիր կրթություն սահմանվեց բոլոր 50 տարեկանը չլրացած բանտարկյալների համար: Այս դրույթը պարունակում էր ոչ միայն դատապարտյալների կրթական գործընթացը կարգավորող նորմերի համակարգի նկարագրություն, այլև նկարագրում էր բանտարկյալների հետ կրթական աշխատանքը: Նշված ժամանակահատվածի վերջին տարիներին պատիժ կրող անձանց կրթության մակարդակի բարձրացումը հանդես էր գալիս ուղղիչ աշխատանքային հաստատության հաջողության մաս: Նախատեսվում էր կիսագրագետ և ոչ գրագետ (անգրագետ) անձանց համար եռամսյա 12-ժամյա շաբաթական ծանրաբեռնվածություն, իսկ գրագետ անձանց համար՝ վեցամսյա դասընթացներ՝ շաբաթական 12-24-ժամյա ծանրաբեռնվածությամբ: Այդ գործընթացում առանձին դերակատարում էր ստանում նաև հեռակա ուսուցումը, որի առնչությամբ որոշ հաստատություններում ներդրվում է հեռավար ուսուցման կազմակերպչի պաշտոն[2]: Փոփոխությունների և զարգացումների այդ գործընթացի արդյունքում 10 տարի անց բանտերում կրթությունը դարձավ առավել առարկայական, և արդեն 1930-ական թթ.-ներին բանտային աշխատողները պետք է ուշադրություն դարձնեին պատիժ կրող անձանց հետ կրթական և մշակութային հետևյալ աշխատանքներին.

- Դպրոցի աշխատանքների քիչ տոկոսը բանտարկյալների շրջանում անգրագիտությունն արմատախիլ անելը և նրանց ինքնակրթության մղելն է:
- Գրագետ բանտարկյալների հետ դասերը պետք է անցկացվեն ամեն օր՝ առնվազն 1 ժամ, իսկ գրագիտության վատ հմտություններ ունեցողների հետ՝ առնվազն շաբաթը 2 անգամ:
- Բոլոր անգրագետ և կիսագրագետ մարդիկ պարտավոր են հաճախել դպրոց, եթե նրանց 50 տարեկանը դեռ չի լրացել:

Մոլդովայի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) իրականացվող կրթական գործընթացը կարելի է բնութագրել անհատականացված: Ինչպես նախորդի պարագայում, այստեղ ևս կրթության իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ (հոդված 35): Հետաքրքիր տարբերություն է այն հանգամանքը, որ քրեակատարողական օրենսգրքով նախատեսվում է պատժի կրման անհատականացում և պլանավորում, որը

ենթադրում է պատիժ կրող անձի նկատմամբ անհատական մոտեցումների կիրառում: Վերջինիս շրջանակում որպես ուղղման միջոց են դիտարկվում դաստիարակչական աշխատանքները, մասնագիտական պատրաստումը և հանրակրթությունը (հոդված 167): ՔԿՀ-ներում կրթության նպատակ է դիտարկվում «... նրանց համամարդկային համընդհանուր արժեքներին ծանոթացնելը, օրենքին հնազանդեցումը, սոցիալական օգտակար հմտությունների զարգացումը, ինչպես նաև գիտակցության և մշակութային մակարդակի բարձրացումը» (հոդված 242): 2009 թվականին Մոլդովայի քրեակատարողական ծառայության կողմից հաստատվել է «Բանտարկյալի համար քրեական պատժի կատարման պլանավորման անհատական ծրագիր»-ը, որի հիման վրա 2018 թվականին մշակվել է մեծահասակ և անչափահաս դատապարտյալների համար վերասոցիալականացման անհատական պլանների մեթոդաբանություն: ՔԿՀ–ներում բուն կրթության կազմակերպման տեսանկյունից՝ ընդհանուր միջնակարգ կրթությունը կազմակերպվում է անչափահասների համար՝ համաձայն կրթության, արդարադատության և ֆինանսների նախարարության համատեղ որոշման: Գործող օրենսդրությունը նախատեսում է միջոցառումներ նաև մեծահասակ բանտարկյալների կողմից միջնակարգ կրթության՝ նրանց կողմից ցանկության պարագայում:

Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետությունում կրթության իրավունքը ամրագրված է Սահմանադրությամբ (հոդված 35), իսկ Քրեակատարողական օրենսգրքով սահմանվում են կրթության որոշ ձևեր, որոնց կարող են հասանելիություն ունենալ բանտարկյալները պատժի կրման ընթացքում: Միևնույն ժամանակ, դեռևս հստակեցված չեն դրանց մեխանիզմներն ու իրականացման ընթացակարգերը: Կրթության կազմակերպման տեսանկյունից հանրակրթությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի տարածքում տեղակայված ուսումնական հաստատության կողմից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների և կալանավորված անձանց համար հանրակրթական ծրագրերի (բազային ֆորմալ կրթություն) իրականացումը դրական արդյունք է տալիս վերջիններիս վերասոցիալականացման գործում (ԱՄՆ, Ֆրանսիա, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Եգիպտոս և այլն): Մասնագետները հստակ նշում են,

որ վերոնշյալ անձանց հանրակրթության իրավունքի ապահովումը գործոնային ազդեցություն է ունենում պետության համար. մի կողմից հանրակրթության միջոցով ապահովվում է դատապարտյալների և կալանավորված անձանց նվազագույն գրագիտության մակարդակը, իսկ մյուս կողմից այդ բազային կրթությունը միջոց է, որ այդ անձը հնարավորություն ունենա աշխատաշուկայի պահանջներին համահունչ այլ կրթական մակարդակում կրթությունը շարունակելու (ֆորմալ և ոչ ֆորմալ): Սակայն մասնագիտական կարծիքի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների և կալանավորված անձանց համար հանրակրթական ծրագրերի իրականացումն էապես արդյունավետ է լինում, երբ պետությունը, բացի Սահմանադրությամբ ամրագրված պարտադիր բազային կրթությունից, միջոցներ է ձեռնարկում այդ անձանց կրթական հետագա մակարդակներում կրթությունը (ֆորմալ և ոչ ֆորմալ) շարունակելու և նրանց զբաղվածության խնդիրները լուծելու առումով, ինչի արդյունքում վերոնշյալ անձինք, իրենց նվազագույն գրագիտության մակարդակն ապահովելուց բացի, հնարավորություն են ունենում աշխատաշուկային համահունչ մասնագիտացում ձեռք բերել և որպես անհատ ինքնադրսևորվել, որը պետության համար տնտեսական (ՀՆԱ) առումով նաև դրական ցուցանիշ է ապահովում (դատապարտյալներն ու կալանավորված անձինք ռեսուրս սպառողից այն արտադրող են դառնում)[3]:

1952 թվականին Դանիայում ընդունվել է բանտային կրթության կանոնակարգը, որով կրթությունը պետք է կազմակերպվեր խմբային կերպով, հնարավորության դեպքում աշխատանքային զբաղվածության ժամերից հետո: Այն ամրագրում էր նաև կրթության պարտադիր պահանջը մինչև 30 տարեկան բոլոր պատիժ կրող անձանց համար. նրանք պետք է մասնակցեն դանիերենի, հիմնական գրագիտության, ինչպես նաև մաթեմատիկայի, քաղաքացիական դաստիարակության դասընթացներին: Ըստ անհրաժեշտության այս ցանկում կարող էին ներառվել նաև այլ առարկայական ուղղություններ: 1968թ.-ին դանիական արդարադատության նախարարությունը ձևավորեց կրթական հանձնաժողով՝ գնահատելու համար պատիժ կրող անձանց կրթական գործունեության բովանդակության և կազմակերպման արդյունավետությունը, ներառյալ մասնագիտական ուսուցման և այլ հիմնախնդիրները: Հանձնաժողովի զեկույցը հրապարակվեց 1973թ.-ին՝

եզրահանգմամբ, որ պատիժ կրող անձանց կրթությունը չի համապատասխանում երկրում հաստատված և գործող կրթական պահանջներին: Վերհանված հիմնախնդիրները լուծելու համար կառավարության կողմից նույն հանձնաժողովին առաջարկ արվեց մշակելու ՔԿՀ-ներում և դրանից դուրս կրթության բարեփոխումների պլան: Վերջինս ստացավ «Skadhauge» պլան անվանումն ի պատիվ կրթության հարցերով քրեակատարողական ծառայության խորհրդականի: Այս պլանի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ բաց տիպի հիմնարկի բանտարկյալները ցերեկային ժամերին ազատվում էին կրթական գործունեության նպատակով, իսկ փակ տիպի ռեժիմով հիմնարկներում ստեղծվում էին համապատասխան պայմաններ, որոնք պետք է համահունչ լինեին երկրում գործող ընդհանուր կրթության համակարգի որակական պահանջներին: «Skadhauge» պլանը հետագայում լայն տարածում գտավ նաև ողջ Եվրոպայում:

Նշված փոփոխությունները հանգեցրել են նրան, որ Դանիայում ՔԿՀ-ում կազմակերպվող կրթության և պետական կրթական համակարգի միջև ձևավորվել է կայուն համագործակցության ավանդույթ: Տարիներ շարունակ պատիժ կրող անձիք հանձնում են նույն քննությունները և գնահատվում նույն գնահատման սանդղակով, ինչ բանտից դուրս կրթական ծրագրերում ընդգրկված մյուս մեծահասակները: Այս մոտեցումը հատկապես ամրապնդվել է Մեծահասակների կրթության մասին օրենքի (2000թ.) ընդունմամբ, որով ՔԿՀ-ներում գտնվող դպրոցների մեծ մասին շնորհվել է «տեղական մեծահասակների կրթության կենտրոնների» կարգավիճակ, որը հնարավորություն է տալիս պատժից ազատվելուց հետո շարունակել կրթության համայնքային մեծահասակների կրթության կենտրոններում:

1998 թվականին Նորվեգիայի կրթության մասին օրենքում փոփոխություններով սահմանվում էր, որ չափահասները, ովքեր չեն ավարտել կամ ունեն թերի միջնակարգ կրթությունը, իրավունք ունեն շարունակելու իրենց ուսումնառությունը սեփական դիմումի համաձայն, իսկ չափահասության տարիքային շեմ դիտարկվում էր 25 տարեկանը, որի արդյունքում պատիժ կրող անձանց մեծամասնությունը (21-40 տարեկան) ստացավ միջնակարգ կրթության ամբողջական իրավունք: Այս փոփոխություններով սահմանվում էր նաև «աշխատավայրում ընդհանուր մասնագիտական կրթություն» ստանալու իրավասությունը, որի արդյունքում: ՔԿՀ-

ներում գործող արհեստանոցները ձեռք բերեցին «կրթական աշխատավայրի» կարգավիճակ. դրանցում ընդգրկումը հավասարազոր էր մասնագիտական կրթության ստանալու կարգավիճակին: Այդ աշխատավայրերում մեծ քանակությամբ անձանց ներգրավումը խրախուսելու համար ՔԿՀ վարչակազմն ընդգրկված յուրաքանչյուր պատիժ կրող անձի համար պետության կողմից ստանում էր հստակ չափով սահմանված լրացուցիչ գումար: Միջնակարգ դպրոցների և նման կարգավիճակ ունեցող արհեստանոցների արդյունավետ համագործակցության արդյունքում ՔԿՀ-ներում ստեղծվում էին բոլոր հնարավորություններն ուսուցման արդյունավետ և շարունակական կազմակերպման համար:

Նորվեգիայում կրթության միջոցով պատիժ կրող անձի վերասոցիալականացումը պաշտոնապես հռչակվել է որպես քրեակատարողական ծառայության երկարաժամկետ գերակայություն: Զարգացման այս փուլում, սակայն, քրեակատարողական համակարգի և դրանից դուրս գտնվող մարմինների մոտ դեռևս հստակ և միասնական պատկերացում չկար ՔԿՀ-ներում կրթության նպատակի, տեսական հիմքերի և իրականացման հնարավոր մոդելների կամ մեխանիզմների վերաբերյալ: Այդ նպատակով ՔԿՀ-ի և կրթության մարմինների միջև սերտ նախաձեռնվեցին համագործակցային առարկայական քայլեր: Որպես օրինակ՝ կարևոր սկզբունք համարվեց իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանեցնել պատիժ կրող անձանց կարիքներին, ինչպես նաև համագործակցել համայնքի կրթական մարմինների հետ անհրաժեշտ հմտությունները փոխանցելու համար: Նշված փոփոխությունների արդյունքների և ՔԿՀ-ում կրթության արդյունավետության մասին առաջին անգամ 2005 թվականին Նորվեգական կառավարությունն Ազգային ժողովում հանդես եկավ ՔԿՀ-ում կրթության վերաբերյալ հաշվետվությամբ, որում ներկայացվեց ՔԿՀ-ներում իրականացվող կրթության գործընթացի բարելավման և զարգացման ճանապարհային քարտեզ, որը կարող էր դրական ազդեցություն ունենալ նաև մյուս ոլորտների վրա: Այս հաշվետվությունից արդյունքները նպաստեցին նրան, որ որոշ ժամանակ անց Նորվեգիայում գործող 52 բանտերից 46-ում սկսեցին գործել դպրոցներ, իսկ արդեն 2008 թվականից նորվեգական բոլոր բանտերում նախաձեռվեց կրթության կազմակերպման գործընթաց: ՔԿՀ-ներում ֆորմալ

կրթության համակարգում ներառվեցին տարրական և միջնակարգ դպրոցները, որակավորման բարձրացման դասընթացները, մասնագիտական ուսուցումն ու բարձրագույն կրթությունը:

1980-ական թթ.-ներին Շվեդիայում համընդհանուր ապակենտրոնացման քաղաքականության արդյունքում ազգային գործակալություններից ՔԿՀ-ներում կրթության ֆինանսավորման պատասխանատվությունը տեղափոխվեց տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Կարճ ժամանակ անց՝ 1990թ.-ին կրթության և արդարադատության նախարարությունների համատեղ որոշման համաձայն՝ բանտերում կրթության ֆինանսական և գործնական պատասխանատվությունը ստանձնեց արդարադատության նախարարությունը՝ ի դեմս իր ենթակայությամբ գործող քրեակատարողական ծառայության: «Մեծահասակների կրթության մասին» օրենքում իրականացվեցին փոփոխություններ, որոնցով համայնքային մարմինները դադարում էին պատասխանատվություն ստանձնել իրենց համայնքում գտնվող բանտի կրթական գործունեության համար: Արդյունքում քրեակատարողական ծառայությունը պատասխանատվություն և պարտավորություն էր ստանձնում ապահովել բանտերում պատիժ կրող անձանց՝ օրենքով նախատեսված կրթության իրավունքի իրացման նպաստավոր պայմաններ՝ վերադառնալով մինչ այդ գործող համակարգի տրամաբանությանը:

[1] Տե՛ս https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae կայքէջում, կանոններ 28.1 և 28.3:

[2] Жирнов В. Общеобразовательное обучение осужденных в местах лишения свободы //Преступление и наказание. - 2006. - № 6, էջ 23:

[3] https://unesdoc.unesco.org/in/documentViewer.xhtml?v=2.1.196&id=p::usmarcdef_0000111660&file=/in/rest/annotationSVC/DownloadWatermarkedAttachment/attach_import_354bdf6a-72e0-4690-96a1-9f867f1822e0%3F_%3D111660engo.pdf&locale=ru&multi=true&ark=/ark:/48223/pf0000111660/PDF/111660engo.pdf#%5B%7B%22num%22%3A403%2C%22gen%22%3A0%7D%2C%7B%22name%22%3A%22XYZ%22%7D%2Cnull%2Cnull%2C0%5D

Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է
հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:
Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2024թ.
© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

ԶԵԿՈՒՅՑ

«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ 19 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ»

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-Ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում:
ՀԿ-Ն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:

NGNGO
NEW GENERATION

contact@ngngo.net
www.ngngo.net

+374 60478989
+374 55478980

© 2024. The guide was published by New Generation Humanitarian NGO
© 2024. Designed by New Generation Humanitarian NGO